

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

**ԱՅՈՒ, ԿԸ ՀԱԲԱՏԱՆՔ, ՈՐ
 «ԿՐՆԱՆՔ»Ը ԵՒ
 «ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ»
 ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ Է**

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ամուսնալուծումը ծնողներ՝ Քենիացի սեւամորթ եւ մահմեդական հորմէ, եւ Հիւսիսային Ամերիկայի նահանգներէն Քանսասի սպիտակամորթ ու ֆրիստոնեայ մօրմէ, Հոնոլուլուի մէջ ծնած ծերակուտական Պարաֆ Օպամա, դարձաւ Ամերիկայի առաջին սեւամորթ 44րդ նախագահը:

Պարաֆ Օպամայի աննախընթաց այլ շարժումները նախագահական ընտրութիւնը հետեւանքը չեղաւ պատահականութեան: Հետեւանքը չեղաւ Լնտրապայմաններու մէջ սովորական դարձած հակա-ժողովրդական որեւէ բիրտ միջամտութեան: Հատուածական կամ բիրտացի անգնահատելի շահեր հետապնդող, փառասիրական գաղափարներ գոհացնող արկածային դրամական պայմար մը, որուն պատճառով ընտրութիւններուն՝ ժողովրդական մասնակցութեան տոկոսային համեմատութիւնը ընդհանրապէս եղած է միշտ ցած, համարեայ երկրի ողջ մեծամասնական ազգայնականութեան ակնբախանտարբերութեամբ:

Օպամայի նախագահական ընտրութիւնը, բացարձակ, հետեւանքը չեղաւ իր համակրելի, երիտասարդ, գրաւիչ նառախօս, մտքի պայծառութեան տէր եւ հետեւողական անձնաորութիւն մը ըլլալուն: Այդ կարգի հեղինակութիւններ միշտ ալ եղած են, բայց չեն հասած նախագահութեան: Այդ չէ ժողովուրդի փնտռածը:

Իր ընտրութիւնը հետեւանքը չեղաւ ուժեղ հանգամանակային եւ նկուն ընտրական ռազմավարութեան մը, որուն կ'ապաւինին ընդհանրապէս ընտրական բատերաբեմ՝ բարձրացող նախագահական բեկնածուները:

Այլ եղաւ, իրապէ՛ս սահուն ընտրութիւն մը, որուն իր մասնակցութիւնը բերաւ ընտրութեան արձանագրուած ԱՄՆ-ի ազգայնականութեան լրիւ վաթսուներ հինգ տոկոսը, որ հեղեղանման հոսեցաւ դէպի փուլատուփերը:

Պարաֆ Օպամա, Ամերիկայի Միացեալ Նահանգներու զինուորական բարձր խաւէններու բարձր համարի տէր ընտանիքի մը ժառանգորդ ձան ՄԻԲԷՆ մը չէր:

Ան, իր մօրը եղբորական մահէն ետք՝ իր մեծ մօր բեւերուն տակ հասակնետած, ուսումնառած ու Հարվըրտի գրասեղաններուն վրայ փաստաբանական ուսման հետեւած ու մասնագիտացած որբ

Շաբ.ը էջ 19

ՍԴՅԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՑԻՆ «ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՉԻ ԼԻԱԶՕՐԵԼ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԲԱՆԱԿՑԵԼ ԻՐ ԱՆՈՒՆԻՑ»



ՄԴՅԿ ներկայացուցիչները մամուլային ընթացքին: Ձախէն՝ Վահան Միրխանեան Լիւդմիլա Մարգսեան եւ Գուրգէն Եղիազարեան

Երկուշաբթի, Նոյեմբեր 10-ին Երեւանի մէջ տեղի ունեցած մամուլային ասուլիսի մը ընթացքին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչները տարածեցին Կուսակցութեան յայտարարութիւնը դարաբաղեան հարցի շուրջ ստեղծուած իրավիճակի մասին:

ՄԴՅԿ վարչութեան ատենապետ Լիւդմիլա Մարգսեան լրագրողներուն ներկայացուց Կուսակցութեան յայտարարութիւնը, որուն մէջ մասնաւորապէս ըստուած էր. -

«Հայաստանի ժողովուրդը այսօրուայ իշխանութիւններին չի լիազօրել իր անունից բանակցել եւ ստորագրել միջազգային պայմանագրեր: Ցանկացած նման փաստաթուղթ անօրինական է, եւ պատասխանատուութիւնը դրուելու է այն ստորագրել պարտադրող միջազգային կառույցների վրայ: Իրական կոնֆլիկտի կողմը Ղարաբաղն է, եւ նա որեւէ որոշումով ոչ միայն ապօրինի իշխանութիւններին, այ-

Շաբ.ը էջ 4

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀՆՉԱԿԵԱՆ ԳՈՐԾԻՉ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՐՁՈՒՍԱՆԵԱՆԻ ԱՐԽԻՒՆԵՐՈՒ ԲԱՑՈՒՄ ՄԻՇԻԿԸՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

Հոկտեմբեր 31-ին Միշիգընի էն Արպըր համալսարանէն ներս, Հայագիտական Ծրագրի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ յատուկ արարողութիւն, որուն ընթացքին կատարուեցաւ արխիւներու բացում՝ Հնչակեան գործիչ Համբարձում Արզումանեանի, որ եղած է Կուսակցութեան Պարսկաստանի ղեկավարներէն:

Արխիւները շուրջ 1200 էջ են եւ կը վերաբերին Հնչակեան Կուսակցութեան գործունէութեան եւ անձնական նամակագրութեան:

Մեծ մասամբ հայերէն լեզուով պատմական այս նիւթերը համալսարանին նուիրուած են ժամանակ մը առաջ, Արզումանեանի ընտանիքի անդամներուն կողմէ, սակայն վերջերս միայն աւարտած է անոնց դասաւորումը:

Արխիւները այժմ հերթաբար կը գտնուին Համալսարանի ինթըրնէթային յատուկ կայքէջին վրայ, որպէսզի մատչելի ըլլայ պատմաբաններու, ուսումնասիրութիւններ կատարողներու եւ ընդհանրապէս հասարակութեան համար:



Պատմական փաստաթուղթերուն կարելի է ծանօթանալ այցելելով Միշիգընի համալսարանի կայքէջը (<http://www.umich.edu/>) եւ

Շաբ.ը էջ 4

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ՍԴՅԿ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը անցեալ Ուրբաթ օր այցելել է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Երեւանի կենտրոնական գրասենեակը, ուր ընդունուեցաւ Կուսակցութեան տարբեր կառույցներու ներկայացուցիչներուն կողմէ:

Հանդիպումի ընթացքում քննարկուեցաւ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման ներկայ վիճակը, ինչպէս նաեւ հանգամանորէն անդրադարձ եղաւ Հայ Ազգային Գոնկրէսի հետագայ ռազմավարութեան, կազմակերպական կարողութիւններու հզորացման ու ներքաղաքական իրավիճակին առնչուող հարցերուն:

Այս այցը կ'իջար Հայաստանի առաջին նախագահին կողմէ Հայ Ազգային Գոնկրէսի մաս կազմող կուսակցութիւններու իր տուած այցելութիւններու ծիրէն ներս:

50 ՀԱՁԱՐ ՏՈՒՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅԱՒ Ի ՆՊԱՍՏ «ՀԱՅԱՍՏԱՆ» ԳԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԳԵԾԵԼԱՐՇԱԻ ԸՆԹԱՑՔԻՆ



Տիկին Գալայրիկա Պոյաճեան խօսք կ'առնէ Ս. Յակոբ Եկեղեցւոյ մուտքին

Հայաստան Համահայկական Հիմնադրամի Լոս Անձելըսի եւ թորոնթոյ տեղական վարչութիւններու համագործակցութեամբ տեղի ունեցած հանգանակային հեծելարշաւի միջոցաւ 50 հազար տոլարի նուիրատուութիւններ եղան յօգուտ Հիմնադրամի տարեկան թելեթոնին:

Հեծելարշաւի գլխաւոր հերոսուհին կը հանդիսանար Թորոնթոյէն Տիկին Գալայրիկա Պոյաճեան: Ան Հոկտեմբեր 28-ին հիւսիսային Քալիֆորնիոյ Մոնթրէյ քաղաքէն ճամբայ ելաւ եւ ծովեզեր-

Շաբ.ը էջ 19

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՄԱՆՔ ՍՊԱՍՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻՆ

Սերժ Սարգսեանի վերջին օրերի հրապարակային յայտարարութիւններում հետաքրքիր շեշտադրումներ են նկատուում: Երկու օր առաջ նա, օրինակ, յայտարարել է, թէ «Այս ընթացքում, կարծում եմ, որ հանրային քննարկումների կարիք կը լինի: Ես գոնէ Հայաստանի, հայ հասարակութեան համար տեսնում եմ քննարկման անհրաժեշտութիւն, մենք հաճոյքով կը գնանք այս քննարկումներին»: Խօսքը, հասկանալի է, դարաբաղեան խնդրի կարգաւորման մասին է:

Սերժ Սարգսեանը երեւի չի նկատել, որ Հայաստանում այս թեմայով «հանրային քննարկումները» վաղուց են ընթանում: Մէկն ասում է «ոչ մի թիզ հող թշնամուն», միւսն ասում է «պէտք լինի՝ կը հասնենք Մախաչկալա», երրորդն ասում է «որոշ տարածքներ պիտի գիջենք, բայց պիտի լաւ չափենք անվտանգութեան գոտու լայնութիւնը» եւ այլն: Այլ հարց է, որ այդ թեմայով քննարկումներն առարկայական չեն, որովհետեւ համաձայնագրի նախագիծը չկայ: Եթէ չկայ, ինչի՞ շուրջ «հանրային քննարկումներ» ծաւալենք: Իսկ Սերժ Սարգսեանն այդքան «դուխ» չունի, որ բերի, ծրագրեր ներկա-

յացնի ժողովրդին ու ասի «այ սա է, մենք վեց շրջան տալիս ենք, խաղաղապահները մտնում են, փախստականները վերադառնում են, ճանապարհները բացուում են, ու մի 10-15 տարի յետոյ Ղարաբաղում հանրաքուէ է անցկացում, հիմա եկէք քննարկենք»: «Դուխ» չի ունենայ, որովհետեւ նա փաստօրէն ինքն իր լարած թակարդն է ընկել. տասը տարի շարունակ ինքն ու Քոչարեանն էին քարոզում «ոչ մի թիզ հող թշնամուն», հիմա ինչպէ՞ս է ինքն այդ տարբերակը ներկայացնելու հանրութեանը (եւ այն էլ, ինչպէս ինքն է ասում, «հաճոյքով»): Թե՞ ուզում է հանրային քննարկումներ սկսել՝ առանց կարգաւորման ծրագրեր ներկայացնելու եւ ընդամէնը յղում անելով ինտերնետային ինչ-որ կայքերի վրայ: Չէ, ախպեր, մենք անգորակ մարդիկ ենք, ինտերնետեան չենք հասկանում, թող Սերժ Սարգսեանն ուղիղ տեքստով ասի, թէ ինչ է նախատեսուած մարդիկէն սկզբունքներով, մենք էլ քննարկենք: Այնպէս չստացուի, որ քննարկենք-վերջացնենք, յետոյ ասի «սիսլ սայթ էիք մտել»: Բացի այդ էլ, եթէ «հանրային քննարկումները նրա համար այդքան կարեւոր

էին, ինչո՞ւ առանց այդպիսի քննարկումների ստորագրեց մոսկովեան հռչակագիրը: Ո՞վ է նրան ասել, որ ժողովուրդը կողմ է մարդիկէան սկզբունքներին:

Ի դէպ, մոսկովեան հռչակագրի մասին: Այդ փաստաթղթի կէտերից մէկում խօսուած է հակամարտութեան կողմերի միջեւ փոխվտահոլութեան միջոցով ձեւաւորման անհրաժեշտութեան մասին, եւ հասկանալի է, որ տուեալ դէպքում նկատի է առնուած հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների միջեւ փոխադարձ ատելութեան եւ թշնամանքի յաղթահարումը: Սա, իհարկէ, իսկապէս կարեւոր է, բայց եկէք համաձայնուենք, որ այս հարցն առանցքային նշանակութիւն է ձեռք բերում միայն այն դէպքում, եթէ նախատեսուած է, որ Ղարաբաղը պիտի մնայ Ադրբեջանի կազմում: Եթէ Ղարաբաղն անկախ լինի, «փոխադարձ թշնամանքի» հարցն այնքան էլ կարեւոր չէ. երկու երկրներն միջեւ կը լինի պետական սահման, եւ ժամանակի ընթացքում միւս հարցերը կը կարգաւորուեն: Այսինքն, եթէ պաշտօնական փաստաթղթում այս հարցն այդքան կարեւորում է, նշանակում է՝ կարգաւորման առաջին փուլում նա-

ԺՈՂՈՎՐԴԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ Է

Խիստ գուարճալի էր հետեւել, թէ ինչպէս են ոմանք երկչոտ փորձեր անում ԱՄՆ նախագահական ընտրութիւններում Բարաք Օբամայի տարած յաղթանակը ներկայացնել որպէս սերժանտական իշխանութեան վարած արտաքին քաղաքականութեան արդիւնք: Սա՛ իմիջիայլոց: Իսկ ընդհանրապէս, Օբամայի ընտրութիւնը ԱՄՆ նախագահի պաշտօնում ժողովրդավարութեան յաղթանակն էր, ընդ որում՝ ոչ միայն ԱՄՆ-ում, այլեւ նրա սահմաններից դուրս:

Յայտնի իրողութիւն է, որ Միացեալ Նահանգները համարուում է ժողովրդավարութեան ֆորպոստը եւ դէմքը ողջ աշխարհում: Եւ ահա, ԱՄՆ նախագահի պաշտօնում Ջորջ Բուշի ընտրուելու կերպը լեզու տուեց անգամ ամենամանր կարգի բռնակալներին, թէ իբր տեսէք, անգամ ժողովրդավարութեան դրօշակակիրը համարուող երկրում ընտրութիւնները չեն արտացոլում ժողովրդի կամքը: Ինչ իսոքա, Բուշի ընտրութեան հարցերը կապուած էին ոչ թէ օրինականութեան, այլ տուեալ երկրի ընտրական համակարգի

առանձնայատկութիւնների հետ, եւ նոյն պատճառները, որ յանգեցրին Բուշի յաղթանակին, կարող էին հանգեցնել նաեւ նրա պարտութեանը: Նկատի ունեմ, որ այդ հանգամանքների, իսկի կանոնների առաջ հաւասար էին թէ՛ Բուշը եւ թէ՛ նրա հակառակորդը: Բայց դե, մանր բռնակալներին, իշխանագողերին ու ժուլիկներին թէ՛մա է հարկաւոր: Բարաք Օբամայի ընտրութիւնը հանեց բոլոր հարցերը, բոլոր կասկածները, բոլոր բռնակալների բերանները եւ ցոյց տուեց, որ ժողովրդավարութիւնը կենսունակ գաղափար է: Միանշանակ է, որ Օբամայի յաղթանակը կը վերականգնի ոչ միայն ԱՄՆ-ի, այլեւ ժողովրդավարութեան, ազատութեան եւ մարդու իրաւունքների պաշտպանութեան գաղափարների սասանուած հեղինակութիւնը: Եւ ի դէպ, կարեւոր է ընդգծել, որ այս ընտրութիւններից առաջ էլ քիչ չէին խօսակցութիւնները, որ ջնուգամասոնական ու չգիտեմ ինչ ուժեր թոյլ չեն տայ Օբամայի յաղթանակը նախագահական ընտրութիւններում, բայց ժո-

ղովրդի կամքը յաղթեց, ապացուցուեց, որ անպարտելի է ժողովրդի կամքը, յեղափոխութիւնը տեղի ունեցաւ, տեղի ունեցաւ վարքի փոփոխութիւնը: Հենց վարքի փոփոխութիւն է այն, որ ԱՄՆ-ն ընտրեց սեւամորթ նախագահ:

Այս փոփոխութիւնն, ի դէպ, մէկ օրուայ արդիւնք չէ: Դեռ տարիներ առաջ գարմանալի էին թուած հոլիվուդեան այն ֆիլմերը, որտեղ ԱՄՆ նախագահին մարմնաւորում էին սեւամորթ դերասաններ, եւ այդ փաստը ընդամէնը դեմագոգիայի տպաւորութիւն էր թողնում, ընդամէնը անհարիւրութեան արձանագրում: Եւ հոլիվուդեան այդ ֆիլմերը նման են այսօր Հայաստանում տարածուող DVD-ներին, որոնք կաթիլ առ կաթիլ իրականութիւն են կերտում: Արդարութիւնը յաղթեց, եւ ճնշուածները, նուաստացածները, խոշտանգուածները, իրաւագուրկները հիմա արդէն ղեկավարում են աշխարհը, հիմա արդէն աշխարհը ղեկավարում են ազատ ժողովուրդները, ազատ մարդիկ:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

խատեւում են հայ եւ ադրբեջանցի բնակչութեան անմիջական շփումներ (այլ կերպ ասած, ադրբեջանցի փախստականները վերադառնում են): Իսկ ադրբեջանցի փախստականները, հասկանալի է, կը վերադառնան միայն այն դէպքում, եթէ հայկական զօրքերն արդէն դուրս են բերուել այդ տարածքներից, եւ նրանց փոխարէն տեղաբաշխուել են միջազգային խաղաղապահներ (այդ թւում՝ նաեւ Ղարաբաղի ներսում, ասենք՝ Շուշիում):

Եւ այնուամենայնիւ, սրանք ընդամէնը տեսական դատողութիւններ են, լաւագոյն դէպքում՝ ենթադրութիւններ: «Պաշտօնապէս» մենք կարգաւորման մասին ոչինչ չգիտենք, հետեւաբար՝ լաւ կը լինի ոչինչ էլ չքննարկենք: Սուսուփուս սպասենք, մինչեւ Սերժ Սարգսեանն ինքը հաճոյքով «հանրային քննարկումներ» նախաձեռնի: Այդ դէպքում գոնէ ստիպուած կը լինի ներկայացնել այն կոնկրետ ծրագրերը, որը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները խոստացել են ներկայացնել շատ մօտ ապագայում՝ հիմնուելով մոսկովեան հռչակագրի եւ մարդիկէան սկզբունքների վրայ: Հենց այդ ժամանակ էլ Սերժ Սարգսեանը կը հասկանայ, թէ ինքն ու Քոչարեանն ինչ ահաւոր շրջապատցուի մէջ էին նետուած Հայաստանը՝ տասը տարի շարունակ քարոզելով «ոչ մի թիզ հող թշնամուն» ու ձեւացնելով, թէ ժողովրդավարութեան դէմ պայքարում էին, որովհետեւ «ղարաբաղեան հարցը դեռ լուծուած չէր»: Բայց հասկանալ՝ չի նշանակում խուսափել: Սերժ Սարգսեանն այս իրավիճակից դուրս գալու ելք չունի: Դրա համար էլ Բրիւսելից գալիս եւ ուղիղ Ջերմուկ է գնում: Այնտեղից էլ կարող է ուղիղ Շամշադին գնալ, բայց ոչ ելք չէ: Մինչեւ ե՞րբ պիտի փախչի:

ՄԱՐԿ ՆՃԱՆԵԱՆ «ՁՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ՝ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Մրջանի ԽՍԲԱԳԻՐՍՈՒՄ SOFA ՊՇԱԿ ՊԶԱՆՃԵԱՆ ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԿԶՄ ՊԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ Գեղ. (626) 797-7680 Ֆաքս. (626)797- 6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ԻՆՉՈ՞Ւ ԶԵՐԲԱԿԱԼԵՑԻՆ

Սերժ Սարգսեանի դէմ նախապատրաստուող մահափորձի վերաբերեալ Սարգիս Հացպանեանի հրապարակային յայտարարութիւնից յետոյ նախ քրէական գործ յարուցուեց փաստի առթիւ, այնուհետեւ Հացպանեանը յայտնուեց թիրախի կարգավիճակում:

Իրադարձութիւնները զարգացան գլխապտոցտ արագութեամբ. թերթերից մէկում անյապաղ հնչեց դատավճիռը՝ «Հացպանեանը դաւաճան է» (սրան ի պատասխան վերջինս «Տարեգիրքում» հրապարակեց իր մի յօդուածը եւ չափաժոյ արձագանգը իրեն ուղղուած ամբաստանութեանը), այնպէս անձինք հայհոյանքներ եւ սպառնալիքներ տեղացին նրա հասցէին,

Հացպանեանը հարկադրուած հեռացաւ մայրաքաղաքից եւ ապաստան գտաւ ազատագրուած տարածքներում, եւ երբ իրաւապահները որոշեցին դարձեալ ահաբեկել նրա անչափահաս երեխաներին ու կնոջը, վերադարձաւ Երեւան ու ներկայացաւ ԱԱԾ: Մի քանի ժամ տեւած հարցաքննութեան արդիւնքը եղաւ այն, որ հիմա էլ քրէական գործ յարուցուեց Սարգիս Հացպանեանի դէմ՝ «սուտ մատնութիւն» յօդուածի յատկանիշներով: Ի՞նչ է ստացուում. մարդը նախազուէջցնում է, որ նախապատրաստուած է մահափորձ երկրի նախագահի աթոռը բաղեցնող Սերժ Սարգսեանի դէմ եւ անմիջապէս ձերբակալուած սուտ մատնու-

թիւն անելու համար: Շատ թէ քիչ դատողական մարդը կը հարցնի. Հացպանեանի ինչի՞ն էր պէտք սուտ մատնութիւն անել. որ բա՛նտ նստի: Ի՞նչ է, խելքը հացի հետ կերե՞լ է Հացպանեանը:

Ինչպէ՞ս կարողացաւ ԱԱԾ-ն այդքան օպերատիւ որոշել, որ նրա նախազուէջցումը պատրաստուող մահափորձի մասին սուտ մատնութիւն է: Ո՞ր պարագայում այն կը լինէր ճիշդ մատնութիւն. որ մահափորձն իսկապէս կատարուե՞ր: Բայց չէ՞ որ նրա նախազուէջցման նպատակը այն կանխելն ու բացայայտելն էր:

Այս հարցերին սպառնիչ պա-

ՀԱՅԱՍՏԱՆ

ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ-«ՄԱԴՐԻԴԵԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՉԵՆ»

«Մադրիդեան սկզբունքներն» ինձ համար ընդունելի չեն եւ զարմանում եմ՝ ինչպէ՞ս որ եւէ իշխանութիւն կարող է ընդունել այն որպէս՝ հիմնաքար, բանակցութիւններ ծառայելու համար»,- Ազգային ժողովում լրագրողների հետ հանդիպման ժամանակ յայտարարեց «Ժառանգութիւն» խմբակցութեան անդամ Րաֆֆի Յովհաննիսեանը: Նրա խօսքերով, ինքն այդ սկզբունքներին ծանօթ է մամուլից, եւ նրա համար ընդունելի չեն «տարածքների վերադարձը, կարգավիճակի յետաձգման խնդիրը, գաղթականների վերադարձի միակողմանիութեան հարցը»:



«Ժառանգութիւն» խմբակցութեան անդամ Րաֆֆի Յովհաննիսեան

Ինչ վերաբերում է նույն բերքի 2-ին Մոսկուայում ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգաւորման համար ՀՀ, ՌԴ եւ ԱՀ նախագահների միջեւ ստորագրուած եռակողմ հռչակագրին, ապա նախկին արտգործնախարար Րաֆֆի Յովհաննիսեանը կարծում է, որ այն «ընթացիկ հռչակագիր» է: Նա խիստ բացասական է գնահատում այն, որ այդ հռչակագրում Լեւոնային Ղարաբաղի նախագահի ստորագրութիւնը բացակայում է:

«Ես ունեմ յատուկ տեսակէտ, ըստ որի՝ Լեւոնային Ղարաբաղի հիմնախնդրի վերջնական լուծումը չի կարելի դիտարկել առանց ԼՂ ինքնիշխանութեան լիարժէք ճա-

նաչման եւ առանց Թուրքիա-Հայաստան շարաբերութիւնների ամբողջական լուծման: Ոմանք փորձում են իրարից անջատել Հայաստան-Թուրքիա շարաբերութիւններն ու Լեւոնային Ղարաբաղի խնդիրը, բայց ես ունեմ յատուկ տեսակէտ. Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան լուծումը անհնար է Հայաստան-Թուրքիա շարաբերութիւններին», - յաւելեց ԱԺ պատգամաւորը:

Յիշեցնենք, որ դեռ նախորդ գումարման նստաշրջանում «Ժառանգութիւն» խմբակցութիւնը «Լեւոնային Ղարաբաղի ճանաչման մասին» օրինագիծ էր ներկայացրել, որը, սակայն, չէր ընդունուէ:

«Ա1+»-ԻՆ ԿԸ ԿՃԱՐՈՒԻ 30 ՀԱՉԱՐ ԵՐՈ



«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Հայաստանի կառավարութիւնը հաստատեց արդարադատութեան նախարարութեան ներկայացրած որոշման նախագիծը, որով պահանջարկ է փոխարկուած թեանը կը յատկացուի 30 հազար եւրոյին համարժէք դրամ՝ ի կատարումն «Ա1+»-ին վերաբերող Մարդու իրաւունքների եւրոպական դատարանի որոշման:

«Մեյլտեքս» ՍՊԸ-ին, որի մէջ է մտնում 2002 թուականի ապրիլին եթերագրուած «Ա1+»-ը, կը վճարուի 20 հազար եւրոյին համարժէք դրամ՝ որպէս ոչ նիւթական վնասի փոխհատուցում, եւ 10 հազար եւրո՝ որպէս դատական ծախսերի փոխհատուցում:

Որոշման հիմնաւորման մէջ նշուած է, թէ դրա «անհրաժեշտութիւնը պայմանաւորուած է Մարդու իրաւունքների եւրոպական դատարանի վճիռներն անվերապահօրէն կատարելու»: Հայաստանի կողմից եւրոպայի խորհրդի առջեւ ստանձնած պարտաւորութեան կատարման հրամայականով: Վճուի կատարման պարտադիր պայմաններից մէկն էլ դիմումատուի խախտումը իրաւունքների համար եւրոպական դատարանի կողմից սահմանուած արդարացի փոխհատուցման գումարի վճարումն է:

Մարդու իրաւունքների եւրոպական դատարանը այս տարուայ Յունիսի 17-ի վճռով եզրակացրել է, որ «Մեյլտեքս»-ի տեղեկատուութիւն եւ գաղափարներ տարածելու ազատութեանը միջամտելը՝ մասնաւորապէս եօթ անգամ մերժելով հեւարձակման լիցենզիայի տրամադրումը, չի համապատասխանում եւրոպական կոնվենցիայով սահմանուած պահանջներին՝ ի խախտումն 10-րդ յօդուածի»:

«Տարիների ընթացքում մեր վնասները շատ աւելի մեծ էին, քան նշանակուած փոխհատուցումը», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց «Մեյլտեքս»-ի նախագահ Մեսրոպ Մովսէսեանը: - «Ես չէի ուզէնայ ակցիոնոր դնել լրիւ ֆինանսների վրայ, որովհետեւ ինձ համար այսօր աւելի կարեւոր է իմ իրաւունքների վերականգնումը Հայաստանի Հանրապետութիւնում... Մեր ուշադրութիւնը պէտք է սեւեռենք դատարանի որոշման մնացած բոլոր կէտերի կատարման վրայ, որոնցից ամենակարեւորը մեր իրաւունքների վերականգնումն է եւ թափանցիկ մրցութիւնացնելը»:

ԱՄՆ ԴԵՍՊԱՆԸ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԵԼ Է ՄԱՐՏԻ 1-ՈՎ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ՀՀ արդարադատութեան նախարար Գէորգ Դանիէլեանն այսօր ընդունել է Հայաստանի Հանրապետութիւնում Ամերիկայի Միացեալ Նահանգների դեսպան տիկին Մարի Եովանովիչին:



ԱՄՆ Հայաստանի դեսպան տիկին Մարի Եովանովիչ

Հանդիպման ընթացքում դեսպանը հետաքրքրուել է Մարտի 1-ին եւ 2-ին Երեւան քաղաքում տեղի ունեցած դէպքերի առթիւ յարուցուած քրէական գործերի դատավարութեան ընթացքի, քրէական դատավարութեան օրէնսգրքի նախագծի, ինչպէս նաեւ Հայաստանում դատաիրաւական բարեփոխումների մասին:

Արդարադատութեան նախարարը հանգամանօրէն ներկայացրել է բոլոր հարցերի պարզաբանումները եւ դեսպանի խնդրանքով ներկայացրել է դատաիրաւական բարեփոխումների բնագաւառի վերաբերեալ մանրամասներ:

Ըստ նախարարի մամուլի քարտուղարի՝ հանդիպման վերջում կողմերը հետագայ համագործակցութեան պատրաստակամութիւն են յայտնել:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՊԱՆԵԱՆԸ ԿԱԼԱՆԱԴՐՈՒԵԼ Է

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրաւասութեան դատարանի դատարար Գայանէ Կարախանեանը բաւարարեց Ազգային անվտանգութեան ծառայութեան միջնորդութիւնը՝ Ֆրանսիայի քաղաքացի, հայաստանաբնակ Սարգիս Հայրապետեանին կալանաւորելու վերաբերեալ:



Կալանաւորուած ազատամարտիկ Սարգիս Հայրապետեան

Նախորդ շաբաթ Ազգային անվտանգութեան ծառայութիւնը քրէական գործ էր յարուցել «Հայկական ժամանակ» օրաթերթի մի հրատարակման հիման վրայ, որտեղ Հայրապետեանը պնդել էր, թէ «Սերժ Սարգսեանի դէմ մահափորձ է նախապատրաստուած»: Գործը յարուցուած էր Քրէական օրէնսգրքի 35-305 յօդուածի յատկանիշներով՝ «պետական գործչի նկատմամբ մահափորձի նախապատրաստութիւն»:

Յարուցուած գործի շրջանակներում Սարգիս Հայրապետեանը անցեալ ուրբաթ ձերբակալուել էր: Այսօր, ժամը 20:50 րոպէին լրանում է նրա ձերբակալութեան ժամկէտը՝ 72 ժամը:

Ի պատասխան «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին՝ «անվտանգութեան քննիչը արդեօ՞ք կարողացաւ դատարանում ապացուցել, որ Հայրապետեանի ասածները, թէ Սերժ Սարգսեանի դէմ մահափորձ է նախապատրաստուած, իսկապէս սուտ էին», Հայրապետեանի պաշտ-

պան Տիգրան Աթանէսեանը պատասխանեց, որ եզրակացութիւններ անելու համար դեռ շատ վաղ է:

«Ամէն դէպքում, իմ վստահորդը, իհարկէ, չի ընդունում իր մեղքը», - ասաց Աթանէսեանը եւ վստահեցրեց, որ բողոքարկելու են դատարանի որոշումը:

Այն հարցին, թէ ինչո՞վ է անվտանգութեան ծառայութիւնը հիմնաւորում Հայրապետեանին ազատութեան մէջ պահելը, Տիգրան Աթանէսեանը պատասխանեց, որ «դրանք նախաքննութեան տուեալներ են եւ ենթակալ չեն հրատարակման»:

Ամէն դէպքում, Սարգիս Հայրապետեանի շահերի պաշտպանը յայտարարեց, որ քննիչի կողմից բերուած հիմքերը «ակնյայտօրէն դուրս են թէ՛ Սահմանադրութեան, թէ՛ կոնվենցիայի պահանջներից»: Նա պնդեց, որ ծանուցում ստանալուց մի քանի ժամ յետոյ Հայրապետեանը ներկայացել է դատարան եւ նրան անազատութեան մէջ պահելու որոշման համար հիմքեր չկան: Քրէական օրէնսգրքը սուտ մատուցելու կատարելու համար նախատեսուած է մինչեւ 5 տարի ազատազրկում:

ՄՈՍԿՈՒՎԱԲՆԱԿ ՀԱՅԵՐԻ ՄԻԱՅՆ 23 ՏՈԿՈՍՆ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Մոսկուայում ապրող հայերի միայն 23 տոկոսն են Հայաստանի քաղաքացիներ: Այդ են վկայում Ռուսաստանի գիտութիւնների ակադեմիայի ակադեմիկոս Եուրի Յարուլիսեանի «Մոսկուացիները» հետազոտութիւնում ամփոփուած տուեալները:

Մոսկուայում բնակուող հայերի 11 տոկոսը, վրացիների 14 տոկոսը, ադրբեջանցիների 9 տոկոսը, իսկ ուկրաինացիների միայն 1 տոկոսը:

Մոսկուաբնակ հայերի 9 տոկոսն են ամէն տարի այցելում Հայաստան:

Հայերին բացասաբար են վերաբերում մոսկուացի ռուսների 10 տոկոսը, ադրբեջանցիներին՝ 24 տոկոսը, վրացիներին՝ 14 տոկոսը, ուկրաինացիներին՝ 6 տոկոսը:

Մոսկուաբնակ հայերի 32 տոկոսն են իրենց հայաստանցի համար պատասխանել են, որ իրենք ռուսաստանցիներ են: Իսկ հայերին իրենց մայրենի լեզուն են համարում մոսկուացի հայերի 31 տոկոսը:

Ըստ աշխատութիւնում տեղ գտած տուեալների՝ Մոսկուայում բնակուող ուկրաինացիների 36 տոկոսը պահպանել են Ռուսաստանի քաղաքացիութիւնը, վրացիների 37 տոկոսն են վրաստանի քաղաքացիներ, Ադրբեջանի քաղաքացիներ են մոսկուաբնակ ադրբեջանցիների 52 տոկոսը:

Տարբեր համայնքային կառույցների հետ կապ են պահպանում

ԼՈՒՐԵՐ

ԲԱԿՕ ՍԱՐԱԿԵԱՆԸ ԿՐԿԻՆ ԲԱՐՁՐԱԶԱՅՆՈՒՄ Է ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ» Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ հարցազրույցում կրկին բարձրաձայնեց Ղարաբաղեան խաղաղ կարգաւորման բանակցութիւններում Լեռնային Ղարաբաղի մասնակցութեան անհրաժեշտութիւնը:



ԼՂՀ նախագահ Բակո Սահակեան

Պատասխանելով Մոսկուայում Նոյեմբերի 2-ին Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեյջանի նախագահների կողմից ստորագրուած դեկլարացիային վերաբերող հարցին, Սահակեանը ասաց. - «Այնտեղ, որտեղ միջազգային հանրութիւնը, տարածաշրջանի երկրները, միջնորդները փորձում են իրենց ազդեցութիւնը ունենալ եւ հարցը իր տրամաբանական աւարտին հասցնել, իհարկէ, ողջունելի է: Խօսքը գնում է երկխօսութեան մասին, եւ մենք այս տարիների ընթացքում միշտ մեր յայտարարութիւններում ընդգծում էինք, որ անհրաժեշտ է այդպիսի երկխօսութիւն ծաւալել, լայն երկխօսութիւն ծաւալել: Բայց մենք աւելացնում ենք, որ այդ ամէնը թերի է, քանի որ չի մասնակցում հիմնական կողմը՝ Լեռնային Ղարաբաղի հանրապետութիւնը»:

բանակցութիւնների համար հիմք պէտք է ընդունուեն Մադրիդեան սկզբունքները, եւ հարցին, թէ ինչպիսի առաւելագոյն զիջումներ են հնարաւոր Ղարաբաղի կողմից, նախագահ Սահակեանը արձագանքեց. - «Ընդհանրապէս մենք տեսնում ենք մեր մասնակցութիւնը բանակցային գործընթացում, որից յետոյ անդրադառնալու ենք ամբողջ փաթեթի քննարկմանը: Մենք ունենք մեր տեսակէտները, բայց, զրկուած լինելով բանակցութիւններին մասնակցութիւնից, իհարկէ, ի վիճակի չենք այսօր մեր տեսակէտները ներկայացնել: Եւ երբ խօսում ենք այս կամ այն սկզբունքների մասին, լինի դա Մադրիդեան կամ այլ սկզբունքներ, մենք գիտակցում ենք, որ բոլոր սկզբունքները պիտի համաձայնեցուած լինեն առաջին հերթին Լեռնային Ղարաբաղի իշխանութիւնների հետ: Եւ միայն այդ դէպքում մենք կարող ենք մտածել այդ սկզբունքները կեանքի կոչելու մասին»:

Հարցին, թէ ի՞նչ է արուում, որպէսզի Լեռնային Ղարաբաղը դառնայ բանակցային կողմ, Բակո Սահակեանը պատասխանեց. - «Մենք բոլոր հանդիպումների ընթացքում, յատկապէս՝ Մինսկի խմբի համանախագահների մասնակցութեամբ, խնդրում ենք եւ, ինչու չէ՞ պահանջում ենք, որպէսզի նրանք իրենց լիազօրութիւնները եւ իրաւասութիւնները կիրառեն եւ վերականգնեն այսօր խանգարուած ձեւաչափը, կեանքի կոչեն Բուդապէշտեան գագաթնաժողովի որոշումը, որի համաձայն Լեռնային Ղարաբաղի հանրապետութիւնը հանդիսանում է բանակցութիւնների լիարժէք կողմ: Այդ նոյն քննարկումները եւ այդ նոյն աշխատանքը մենք իրականացնում ենք Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնների հետ նոյնպէս, որպէսզի Հայաստանի Հանրապետութիւնը իր ջանքերը գործադրի վերականգնելու Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան մասնակցութիւնը բանակցային գործընթացին»:

Դիտարկմանը, որ Մոսկովեան դեկլարացիան կրկին հաւաստեց, որ

ԵՐՈՒՍԱՂԵՍՈՒՄ ԲԱՆՈՒՄ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ ՅԱՅ ԵՒ ՅՈՅՆ ՅՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՒ



Հայել Յոյն հոգեւորականներու միջեւ ծեծկոտուի Երուսաղէմի սրբավայրերէն ներս

Կիրակի օր, Երուսաղէմի Քրիստոսի Յարութեան տաճարում ծեծկոտուք է տեղի ունեցել հայ եւ յոյն հոգեւորականների միջեւ: Կան տուժածներ ու ձերբակալուածներ: Ծեծկոտուքը սկսուել է, երբ հայ հոգեւորականները նշում էին Գիւտ խաչի տօնը: Այս տօնը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նշում է 4-րդ դարից ի վեր, երբ յայտնաբերուեց Քրիստոսի սրբազան խաչափայտը: Յոյների պնդմամբ, հայերը թոյլ չեն տուել, որ յոյն հոգեւորա-

կաններից մէկը մտնի տաճար: Հայերը պնդում են հակառակը, որ յոյներն են փակել իրենց ճանապարհը: Երուսաղէմի ոստիկանութեան խօսնակ Միքի Ռոզենֆելդը «Ատշի-եյթեդ փրես»-ին ասել է, որ իրենք ստիպուած էին միջամտել: Ձերբակալուել են մէկական հոգեւորական ամէն կողմից: Քրիստոսի Յարութեան տաճարի տարածքը բաժանուած է քրիստոնէական վեց եկեղեցիների միջեւ, եւ բախումներն այստեղ հազուադէպ չեն:

ՍԴՅԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն

լեւ Հայաստանին չի լիազօրել բանակցել, որոշում կայացնել իր փոխարէն»:

Լրագրողներու հարցերուն պատասխանելով Կուսակցութեան վարչութեան անդամ Գուրգէն Եղիազարեան ըսաւ, թէ Մոսկուայի մէջ ստորագրուած հռչակագրով «մի խայտառակ փաստ արձանագրուեց՝ որ Ղարաբաղեան կոնֆլիկտը ունի երկու կողմ՝ Հայաստան եւ Ադրբեյջան», ինչի արդիւնքում Լեռնային Ղարաբաղը «ամբողջութեամբ դուրս մղուեց բանակցային գործընթացից»:

ՍԴՅԿ Կեդրոնական վարչութեան Հայաստանի ներկայացուցիչ, պաշտպանութեան նախկին փոխնախարար Վահան Շիրխանեան իր կարգին յայտարարեց, որ կողմերուն այժմ առաջարկուող լուծումը կը տանի ուղղակի դէպի պատերազմ. - «Միջազգային կառույցները Անդրկովկասում դնում են մշտական գործող ական, որը կարող է պայթել իրենց ուզած ժամանակ: Այս ճանապարհով լուծում տալը Ղարաբաղեան կոնֆլիկտին, նշանակում է, որ յաջողը պատերազմը լինելու է շատ աւելի դաժան, շատ աւելի կործանարար Անդրկովկասի բոլոր ժողովուրդների համար»:

«Ազատութիւն» ռատիոկայանի հարցին, թէ ինչ բանն է որ

կրնայ հանգեցնելու նոր պատերազմի, Շիրխանեան պատասխանեց. - «Հիմա պատկերացնենք այսպիսի վիճակ, որ ստորագրուած է փաստաթուղթ, որը հաստատում է Ադրբեյջանի տարածքային ամբողջականութիւնը, պարտաւորեցնում է գործերը դուրս բերել, փախստականներին վերադարձնել: Ես վստահ եմ, որ Ղարաբաղի ժողովուրդը դա չի ընդունելու: Իսկ չընդունելը ի՞նչ է նշանակում: Չի նախարկուելու, չի հնազանդուելու այդ որոշմանը: Սա նշանակում է պատերազմ... Սա ինձ համար միանշանակ է: Խիստ անհրաժեշտ է, որպէսզի Ղարաբաղի ժողովուրդը եւ իշխանութիւնները ներկայացնեն իրենց յստակ դիրքորոշումը ստեղծուած իրավիճակի վերաբերեալ. համաձայն են նրանք լուծման այն առաջարկներին, որոնք սեղանի վրայ են»:

Վահան Շիրխանեանը նաեւ յայտնեց, որ եթէ խօսքը փոխզիջումներու մասին է, ապա պիտի Ղարաբաղին վերադարձուի Շահումեանը, Գետաշէնը, որոնց դիմաց համարժէք չափով տարածք տրուի Ադրբեյջանին, սակայն այդ տարածքները չեն կրնար ըլլալ Լաչինը, Քելբաջարը, Կուբաթլուն: «Արիւնով վերցուած հողի գինը ուրիշ գին չունի, քան հող հողի դիմաց», շեշտեց ՍԴՅԿ ներկայացուցիչը:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՅՆՁԱԿԵԱՆ ԳՈՐԾԻՉ

Շարունակուած էջ 1-էն

ապա երթալ University Special Collections (History) and Armenian Studies Program էջը:

Բացման յատուկ արարողութեան ներկայ էին Համալսարանի տնօրէնութեան ներկայացուցիչներ, դասախօսական կազմի անդամներ, ուսանողներ, Նոր Սեբունդ Մշակութային Միութեան եւ Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչ Յարութ Տէր-Դաւիթեան, ինչպէս նաեւ Արզումանեան ընտանիքի անդամներ, որոնք եկած էին Միացեալ Նահանգներու տարբեր կողմերէն:

Միջիկրնի համալսարանի Հայագիտական Մրազիրի վարիչ Փրոֆ. Ժիրայր Լիպարիտեան հանդիսութեան առթիւ ի ունեցած ելոյթի

ընթացքին մասնաւորապէս ըսաւ. «Պատճառներէն մէկը, որ ուզեցինք կազմակերպել այս միջոցառումը եւ ներկայացնել Արզումանեանի արխիւները այն էր, որ քաջալերենք այլոց, որպէսզի պահպանեն իրենց ընտանեկան փաստաթուղթերը եւ մղենք այլ կազմակերպութիւններուն որպէսզի բանան իրենց արխիւները ուսումնասիրողներու առջեւ»:

Համբարձում Արզումանեան ծնած է պատմական Գանցակի մէջ: Ան իր քաղաքական գործունէութիւնը սկսած է Թաւրիզ, իրան, որպէս կուսակցական կազմակերպիչ եւ գաղափարախօսութիւնը տարածող, Ռուսաստանի, Եւրոպայի եւ Միացեալ Նահանգներու մէջ, մինչեւ իր մահը 1909 թուականի

Նիւ Եորքի մէջ: Անոր կեանքը աւարտած է 43 տարեկանին, որպէս գործարանի բանուոր: Արզումանեանի արխիւները կ'առնչուին Հնչակեան Կուսակցութեան ներքին հարցերուն, ինչպէս նաեւ մասնաճիւղերու կազմութեան, Պաքուի, Նովորոսիսքի եւ Միաց-

եալ Նահանգներու տարածքին: Համբարձում Արզումանեան մինչեւ իր կեանքի վերջը մնացած է հաւաստաւոր ընկերակալական, միշտ համոզուած ըլլալով այդ գաղափարախօսութեան կարեւորութեան՝ Հայ ժողովուրդի ազգային ազատարական պայքարին մէջ:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԺԻՐԱՅՐ ՍԵՖԻԼԵԱՆԻ ՅԵՏ

«ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՎՐԱՅ ԿՐԱԿՈՂՆԵՐԸ ԱՅՍՕՐ ԱՐԴԷՆ ԵԼԵԼ ԵՆ ՀԱՅՐԵՆԱՎԱՃԱՌՈՒԹԵԱՆ»

- Պարոն Սեֆիլեան, ձեր ղեկավարած «Հայ կամաւորականների համախմբում» նախաձեռնութիւնը նախօրէին որոշել էր դիմել Լեւոն Տէր-Պետրոսեանին՝ հանրահաւաքները նորից սկսելու կոչով: Եթէ հանրահաւաքները վերսկսուեն, կարծում եք հնարաւոր է կանխել Սադրիդեան սկզբունքների հիման վրայ դարաբաղեան հիմնախմբի կարգաւորման շուրջ վերջնական փաստաթղթի ստորագրումը:



- Այո, մեր ակտիւի հաւաքն էր, մենք վերլուծեցինք իրավիճակը եւ այն գնահատում ենք խիստ վտանգաւոր: Եւ եթէ մինչեւ մոսկովեան հռչակագրի օրը ինչ-որ չափով մենք հասկանում էինք ընդդիմութեան կատարած «դադար» մարտավարութիւնը, ապա հռչակագրից յետոյ, կարծում եմ, դադարն անիմաստ է դառնում, չնայած առանց այդ էլ մենք համամիտ չէինք այդ դադարին: Ես յոյս ունեմ, որ Տէր-Պետրոսեանը, լինելով լուրջ գործիչ, անշուշտ, պէտք է ճիշդ պահին համապատասխան քայլեր ձեռնարկի: Բայց մեր մտադրութիւնը միայն կանխելու հարցը չէ, որովհետեւ եթէ ստացուի, Վաշինգտոնում դաւաճանական այդ համաձայնագիրը ստորագրուի եւ դրանից յետոյ ակտիւանանք, սա մեր ժողովրդի կողմից ճիշդ չի ընկալուի: Ուստի, հեղինակութեան անկում տեղի կ'ունենայ, բնականաբար եւ կը տուժի նաեւ մեր գլխաւոր գործերից մէկը, որն է՝ իշխանափոխութիւնը, այս ուժեղ միջին օր առաջ ձեռքարկուելու է: Իսկ ինչ վերաբերում է մեր առաջարկութեանը՝ արդիւնք կը տայ, թէ՛ ոչ, ես համոզուած եմ՝ արդիւնք կը տայ: Բազմահարանոց հանրահաւաքները պէտք է լինեն հետեւեալ իմաստով, որ այս բողոքն ուղղուած չէ այսօրուայ ուժեղ մի պարագլուխների դէմ, այլ ժողովուրդը, փողոցներում կանգնած, պէտք է աշխարհին ուղղի իր խօսքը՝ ասելով, որ դուք իրաւունք չունէք բանակցելու այնպիսի մարդկանց հետ, որոնք կապ չունեն հայութեան հետ, որոնք չեն ներկայացնում հայութիւնը: Եթէ սա արուի տանեակ հազարաւոր մարդկանց կողմից, հնարաւոր չէ, որ չազդի միջազգային գլխաւոր ուժերի վրայ: Հնարաւոր չէ: Անպայման կ'ազդի: Եւ վստահ եմ, որ փաստաթղթի վերջնական ստորագրումը կը կանխուի: Այսինքն՝ մեր առաջարկն այն է, որ պէտք

է հնարաւորինս շուտ ակտիւանալ եւ կանխել Վաշինգտոնում սպասուող դաւաճանական փաստաթղթի ստորագրումը:

- Պարոն Սեֆիլեան, բայց չէ՞ք կարծում, որ այս ընթացքում Սերժ Սարգսեան եւ Ռոբերդ Քոչարեան գոյգը հասցրել է այնպէս տրամադրել Հայաստանի հայերին Ղարաբաղի հայերի դէմ, որ մարդկանց համար արդէն Ղարաբաղը երկրորդական պլան է մղուել: Ձեր կարծիքով, արդեօ՞ք մարդիկ պատրաստ են բազմա-հազարներով դուրս գալ փողոց, որպէսզի կանխեն այդ փաստաթղթի ստորագրումը:

- Չենք կարող չհաստատել այն փաստը, որ կայ այդ տհաճ բանը՝ դարաբաղցի, հայաստանցի, անշուշտ, գլխաւորապէս այս յայտնի գոյգի պատճառով: Բայց իմ կարծիքով, դա ժողովրդի մեծամասնութեան մօտ չէ, եւ եթէ նոյնիսկ ոչ հաճելի, հատուածապարտուած խօսքեր ենք լսում, կարծում եմ, դրանք պահի տակ սսուած խօսքեր են, այլ ոչ թէ հոգու խորքից: Ես համոզուած եմ, որ մեր ժողովրդի զգալի մասը պատրաստ է փողոց դուրս գալ, եթէ վտանգուել է մեր հայրենի տարածքներից որեւէ մի հատուած: Առանց այդ էլ այսօրուայ մեր ընդդիմութեան առաջնորդը՝ Տէր-Պետրոսեանը, մեծ պոտենցիալ ունի տանեակ հազարաւոր մարդկանց փողոց հրաւիրելու: Սրան աւելանում է նաեւ վտանգի պահը, եւ կարծում եմ, որ հարիւր հազարներով ենք հաւաքուելու, ոչ թէ տասնեակ հազարներով:

- Բայց եթէ անգամ հարիւր հազարներով հաւաքուեն, հաշուի առնելով միջազգային կառոյցների այս կեցուածքը, նրանց շահագրգռուածութիւնը եւ Սերժ Սարգսեանի այս թոյլ վիճակը՝ չէ՞ք կարծում, որ հնարաւոր է՝ արդիւնքի չհասնել:

- Եթէ այդ բողոքներն արհամարհուեն միջազգային հանրութեան կողմից, ապա մնում է մէկ լուծում. մինչեւ այդ դաւադիր համաձայնագրի ստորագրումը՝ իշխանափոխութիւն: Սա է, եւ պահը եկել է: Այս պահը մենք չպէտք է բաց թողնենք: Մեր ժողովրդի վրայ կրակել են, մեր ժողովուրդն իրաւունք ունի պաշտպանուելու, այսօր արդէն կրակողները ելել են հայրենավաճառութեան, մեր ժողովուրդն իրաւունք ունի իր հայրենիքին տէր կանգնել: Այսինքն՝ երբ ժողովրդի կողմից որեւէ լուրջ քայլ լինի, միջազգային հանրութիւնը, ուզի-չուզի, պիտի հաշուի նստի ժողովրդի հետ: Պարզապէս, այդ քայլը մեր ժողովուրդը պէտք է անի: Այսինքն՝ մենք քաղաքակիրթ ձեւով փորձում ենք կանխել այդ փաստաթղթի ստորագրումը, եւ եթէ դա միջազգային հանրութիւնը չի ընդունում, ապա դրանից յետոյ ժողովուրդն ինչ որ անի, նրանք պարտաւոր են ընդունել: Սա է, ես ուրիշ ելք չեմ տեսնում: Իսկ Ղարաբաղի հարցով այսօրուայ վիճակից ելքեր կան, այնպէս չէ, որ երբ մենք ասում ենք՝ ոչ մի թիզ, ուրեմն, սա ասողները ռոմանտիկ մարդիկ են, եւ լուծում չկայ: Ոչ, լուծում կայ, եւ եկող օրերին մենք պատրաստուած ենք իրաւական փաթեթ հրամցնել բոլորին, ովքեր կարծում են, որ մենք՝ «ռոմանտիկներս», լուծման ելք չենք գտնում: Ընդհակառակը, մենք այնպիսի լուծում ենք առաջարկելու, որ միջազգային հանրութիւնը «չէ» չի կարողանալու ասել:

- Յիմա չէ՞ք կարող ասել, ինչի մասին է խօսքը:

- Նախնական նախագիծն իմ ձեռքի տակ է, բայց պէտք է յղուի եւ առաջիկայ օրերին անպայման պէտք է դրուի շրջանառութեան մէջ ե՛ւ մեր, ե՛ւ միջազգային բոլոր ատենաներում: Բոլորին պիտի հասկացնել՝ ինչի մասին է խօսքը: Ո՞վ է ասում, որ բանակցութիւնները պիտի միայն այս հունով զնան: Հիմա, ըստ էութեան, խնդրի

լուծման խնդիր չի գնում: Այստեղ գերաբնութիւնների մրցակցութեան խնդիր կայ, թէ ով է տարածաշրջանում աւելի ազդեցիկ լինելու, ով է իր գործերը տեղակայելու Հարաւային կովկասում: Ի մասնաւորէ, Արցախի հարաւարեւելեան տարածաշրջանի մասին է խօսքը: Ռուսները ասում են՝ մենք, ամերիկացիներն ասում են՝ մենք, իրանցիներն ասում են՝ ոչ մենք: Այսպիսի շատ սուր իրավիճակի մէջ ենք այսօր մենք յայտնուել: Իսկ մեր խղճուկ ղեկավարութիւնը բոլորին ասում է՝ այո:

- Ձեր կարծիքով, հանրահաւաքները ե՞րբ է պէտք սկսել, եւ ե՞րբ դրանք կարող են սկսուել:

- Մեր կարծիքով, յաջորդ շաբաթ սկսելու տակաւին ուշ չէ եւ անպայման կը տայ իր արդիւնքը՝ կանխելու իմաստով այս վտանգը: Հետեւելով զարգացումներին՝ ես տեսնում եմ, որ այս մարդը գնում է ստորագրման: Այս մարդուն հետաքրքրում է մի բան՝ որ միջազգային տարբեր ատենաներում իրեն ընդունեն որպէս նախագահ: Նա այդ խնդիրն է լուծում: Նրան չի հետաքրքրում 10 տարի յետոյի Հայաստանը: Նրան հետաքրքրում է իր լեգիտիմութիւնը: Այս մարդիկ բարդոյթով լի անձնաւորութիւններ են: Պետութեան ղեկը յանձնել ենք հիւանդ մարդկանց: Սրանցից պիտի ձեռքազատուենք ամէն գնով: Այստեղ արդէն ժամանակը չէ, որ սպասենք, քաղբանտարկեալները դուրս գան կամ չգան: Բռնատիրութիւն է, բանտերը պիտի լինեն լիքը: Սա պարզ երեւոյթ է, ինչքան շատ մարդ բանտում, այդքան շուտ կը ձեռքազատուենք այս ուժեղ միջոց: Այս տակտիկայով պէտք է շարժուենք եւ ոչ թէ հակառակը, ամէն ինչ անենք, որ քաղբանտարկեալները դուրս գան: Ոչ, ես համամիտ չեմ այս մարտավարութեանը նոյնպէս: Իշխանափոխութիւնն ամէն իմաստով հասունացած է, մնում է քայլ կատարել: Սա է մեր պահանջը: ԼՈՒՍԻՆԷ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Ձեր Ճանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net www.massisweekly.com

HMM Ladies Auxiliary New Years Eve Celebration Featuring Live Entertainment by DJ Hratch December 31, 2008, at 8:00 p.m. HMM Garo Soghanalian Hall 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104 Admission: \$50.00 • Ages 6-12: \$25.00 • Ages 5 & Under Free

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐԱՔ ՕՊԱՍԱՅԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂՐԵԱՆ

Նոյեմբեր 4, 2008, Երեքշաբթի Երեկոյան տեղի ունեցան Ամերիկայի նախագահական ընտրութիւնները, մասնակցութեամբ աւելի քան 130 միլիոն քուէարկողներու, որոնք կը կազմէին ընդհանուր քաղաքացիներու քուէարկելու իրաւունք ունեցողներու 64 առ հարիւրը: Ասկէ առաջ, քիչ պատահած է որ այսքան մեծ համեմատութեամբ մասնակցած ըլլան ընտրութիւններուն: Կը յիշուի շուրջ 100 տարիներ առաջ տեղի ունեցած ընտրութիւն մը, որուն նոյնպէս 60-ի համեմատութեամբ քուէարկողներ եղած են:

Այս ընտրութեանց իբրեւ արդիւնք, Ամերիկայի տեմոքրատ կուսակցութեան փոքրամասնական, աֆրո-ամերիկեան, այսինքն սեւ ցեղի պատկանող թեկնածուն Պարաք Օպամա, ջախջախիչ յաղթանակ մը տանելով, հակառակորդ՝ հանրապետական կուսակցութեան թեկնածու՝ ձօն Մքքէյնի դէմ, ընտրուեցաւ այս մեծ հանրապետութեան 44րդ նախագահը:

Այս ընտրութիւնը իրապէս պատմական երեւոյթ մը նկատուեցաւ, այն իմաստով որ յաղթանակ տանող անձը, Պարաք Օպամա, քիչ մը տարբեր ծագում ունեցող, եւ ամերիկեան «ընդունուած» շրջանակներէն դուրս հրապարակ իջած քաղաքական դէմք մըն էր, որ իր անձնական արժանիքներու, նկարագրային գիծերու, ճարտասանական շնորհքի, մանաւանդ քաղաքական սկզբունքային կեցուածքներու, ինչպէս նաեւ ընտրութեանց նպաստող կազմակերպչական, մարտավարական վստահելի միջոցներու օգտագործումով, ընտրութեանց մէջ գերազանց յաղթանակ տարաւ: Ժողովրդային ձայներու շուրջ 55 առ հարիւր տոկոսը, ինչպէս նաեւ, մանաւանդ նահանգային ձայներու աւելի քան 338ը, (ընտրուելու համար պահանջուած 270ի դիմաց) ապահովելով, դարձաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու 44րդ նախագահը: Իր ընտրութեանէն, այսինքն Նոյեմբեր 4էն մինչեւ իր պաշտօնի ստանձնումը, Յունուարի 20ին, կը նկատուի փոխանցման շրջան մը, ներկայ իշխանութեանէն մինչեւ նոր իշխանութիւն, որուն ընթացքին նորընտիր նախագահը առիթ կ'ունենայ կազմելու իր կառավարութիւնը, եւ տեղեակ մնալու երկրի վերաբերեալ բոլոր անցուղարձեքներ: Օպամայի ընտրու-

թեան յարակից, նաեւ տեղի ունեցան բազմաթիւ կարեւոր նորութիւններ, այս երկրի քաղաքական կեանքի ղեկավարութեան գծով: Ոչ միայն տեղի ունեցաւ փոխ-նախագահի ընտրութիւնը, յանձին սենատոր ձօ Պայտընի, այլ Գոնկրեսի երկու բաժիններէն ներս, սենատի եւ ներկայացուցիչներու Տան, տեմոքրատ կուսակցութիւնը աւելցուց իր մասնակիցներու թիւը, սենատի պարագային, 51էն շուրջ 58ի, իսկ ներկայացուցիչներու տունէն ներս, 225էն 245ի: Այս յաւե-

առաւելագոյնը ըրին, պայքարելու Օպամա-Պայտընի դէմ եւ սակայն այս ճիգերը ապարդիւն ելան: Յաղթանակի երեկոյան, Մքքէյն շնորհաւորեց Օպաման, իր յաղթանակին համար, եւ գործակցութեան անկեղծ տրամադրութիւն յայտնեց: Նոյնը ըրաւ գործող նախագահ ձօրձ Պուշ, եւ Օպամային յայտնեց հեզասահ եւ արագ փոխանցման շրջան մը, զինք Սպիտակ Տուն հրաւիրելով իր ընտանիքին հետ: Թէեւ ձեւական նշանակութիւն ունեցող քայլեր են այս վերոյիշեալները, սակայն ցոյց կու տան Ամերիկեան տեմոքրատի-ժողովրդավարութեան գնահատելի

րը, իրաքի եւ Աֆղանիստանի մէջ, ասոնց հանդէպ ժողովուրդի մօտ տիրող ժխտական տրամադրութիւնները, 1932էն առիւն, Ամերիկայի ենթակուած յուսկոյն անտեսական տագնապը, որուն լուծման համար ձեռք առնուած քայլերը տակաւին իրենց պտուղները չեն տուած, եւ այս տագնապէն ստեղծուած ժողովրդային դժգոհութիւնները, առաւել Պուշի իշխանութեան եւ նախ. Պուշի հանդէպ եղած դժգոհութիւնները, հանրապետական կուսակցութեան, որ կը գտնուէր իշխանութեան գլուխը, եւ ասոնց միացած Ուոլ Սթրիթի ղեկավարներու շահադիտական հետապնդումները, ուղղակի փտախտի հանգամանք ունեցող - այս բոլորը ուղղակի ազդեցին ընտրութեանց վրայ: Ասոնց միացած Օպամայի անձնական, սկզբունքային արժանիքները, եւ կազմակերպչական եւ նիւթական իր առատ միջոցները, ինչպէս նաեւ իր ցեղային ծագումը, առիթ տուին որ Պարաք Օպամա յաջողութիւններ արձանագրէ նոյնիսկ այն նահանգներէն ներս որոնք աւանդականօրէն հանրապետականներու ի նպաստ կը քուէարկէին: Իրեն ի նպաստ քուէարկեցին նաեւ ցեղային խառը բնակչութիւն ունեցող նահանգներ, մանաւանդ սեւերը, համալսարաններու երիտասարդ տարրերը, տարբեր տարիքի ընտրողները, եւ Օպամա հասաւ իր յաղթանակին:

Հետաքրքրականը այս բոլորին մէջ այն է որ Ամերիկայէն դուրս, Եւրոպա, Աֆրիկէ, Ասիա, եւ Մերձաւոր Արեւելքի գաղազան երկիրներ ուղղակի իրենց ուրախութիւնը յայտնեցին Պարաք Օպամայի յաջողութեան ի տես: Այնպէս ստացուեցաւ որ ամերիկեան նահանգային բաժանումներու ընթացքին, կարմիր, կապոյտ նահանգներ չմնացին, այլ միայն ամերիկեան ընտրողներ, որոնք տեմոքրատ Օպամային տուին իրենց ձայները:

ԻՆՉՊԷՍ ՊԻՏԻ ՂԵԿԱՎԱՐԷ ՕՊԱՄԱ

Ի հարկէ երկրի նոր նախագահ Պարաք Օպամա, ընդհանուր կերպով պիտի գործադրութեան դէմ իր պատկանած կուսակցութեան, տեմոքրատ կուսակցութեան ուղեգիծը եւ նոր նախաձեռնութիւնները: Սպիտակ Տան իր հեղինակութիւնը, շատ հաւանօրէն, ինք պիտի կարենայ իմաստութեամբ եւ զգուշաւորութեամբ գործածել, եւ իր հետապնդումները իրականացնելու համար, շատ հաւանօրէն, պիտի

Շարք էջ 19



լուծմանով եւ նախագահի ընտրութեամբ, փաստօրէն այս մեծ երկրի քաղաքան ղեկավարութիւնը լման կը յանձնուի տեմոքրատ կուսակցութեան, որը, առանց լուրջ դժուարութեան կրնայ իրագործել իր նպատակները: Այլ խօսքով, գալիք 4 տարիներու ընթացքին, Սպիտակ Տունը, նախագահ Օպամայով, եւ Գոնկրեսը, իր երկու բաժիններով պիտի գտնուին տեմոքրատներու հսկողութեան ներքեւ: Հակառակորդ կուսակցութիւնը՝ հանրապետական ճանչցուած ջախջախիչ պարտութիւն մը կրեց այս ընտրութեանց ընթացքին, եւ անոր ղեկավար եւ շարքային անդամները, ինչպէս նաեւ համակիր քուէարկող շրջանակները պէտք պիտի ունենան երկար ժամանակ մտածելու իրենց ձախողութեան մասին, եւ ծրագրային նոր կարգադրութիւններով, յաջորդ ընտրութիւններուն մասնակցելու: Թէեւ պէտք է խոստովանիլ որ թեկնածու ձօ Մքքէյն եւ իր փոխ-նախագահի թեկնածու, Ալասքայի կառավարիչ Սառա Փէյլին, իրենց կարելին եւ

նախաձեռնութիւններէն ոմանք, որոշապէս տարբերուող այլ երկիրներու սովորութիւններէն:

ԻՆՉՊԷՍ ՊԱՏԱՀԵՑԱԻ ԱՅՍ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Իր ընտրապայքարի առաջին օրերէն սկսեալ, շուրջ 2 տարիներ առաջ, նախագահութեան թեկնածուութեան իջած Պարաք Օպամա, հրաշալի ելոյթներով, թէ նախնական (primary) կոչուած, եւ թէ թեկնածութեան ընթացքին, կարողացաւ ամերիկեան ընտրական շրջանակներու մօտ - սեւ, հրէայ, երիտասարդ, սպիտակ, հիսբանիք, ազատախոհ (liberal), պահպանողական (conservative), անկախ, տարիքաւոր, եւ այլն, ուրեմն այս բոլորին մօտ ստեղծեց փոփոխութեան (change) անհրաժեշտութիւնը, ամերիկեան ցարդ հետապնդողներին եւ արտաքին քաղաքականութիւններու մէջ: Օպամային նպաստեցին նաեւ բազմաթիւ պարագայական ժխտական երեւոյթներ: Ասոնց շարքին էին Ամերիկայի մղած երկու պատերազմները:

Advertisement for A.B.A. Insurance Services. Features the ABA logo, text 'A.B.A. INSURANCE SERVICES', and '33th ANNIVERSARY' with dates '1975-2008'. Lists services: Life, Health, Group Health, Disability, Long Term Care. Includes logos for Blue Cross of California and Blue Shield of California.

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԵՐԱԺԵՇՏ Է

ԵՐՔԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205 E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



Mission Wine & Spirits

 Red Label 15⁹⁹	 Black Label 18⁹⁹	 Green Label 39⁹⁹	 Gold Label 47⁹⁹	 Blue Label 119⁹⁹
 PATRÓN Silver 33⁹⁹	 CAZADORES REPOSADO 19⁹⁹	 <i>Ultimat Vodka</i> 29⁹⁹	 Don Julio Añejo Tequila 35⁹⁹	 Don Julio 1942 Tequila 78⁹⁹
 GREY GOOSE VODKA 21⁹⁹	 HEAVY WATER VODKA 18⁹⁹	 JACK DANIEL'S Old No. 7 BRAND Tennessee WHISKEY 14⁹⁹	 Ketel One VODKA 18⁴⁹	 SKYY VODKA 9⁴⁹
 CÎROC Vodka 17⁹⁹	 <i>Crown Royal Canadian Whisky</i> 14⁴⁹	 Jose Cuervo Tequila Especial 10⁹⁹	 SMIRNOFF Vodka 8⁹⁹	 Captain Morgan Spiced Rum 10⁹⁹
 Hennessy COGNAC VS 20⁹⁹	 Hennessy COGNAC VSOP 31⁹⁹	 Hennessy COGNAC XO 97⁹⁹	 SKYY VODKA 1.75L 19⁹⁹	 COURVOISIER Cognac XO 79⁹⁹
 PRAVDA VODKA 19⁹⁹	 ABSOLUT Vodka 15⁴⁹	 BACARDI Rum 9⁹⁹	 CRISTALL Russian Vodka 12⁹⁹	 <i>Milagro Silver Tequila</i> 15⁹⁹
 RUSSIAN STANDARD VODKA 10⁹⁹	 IMPERIA VODKA 16⁹⁹	 JACQUES CARDIN COGNAC VSOP 15⁹⁹	 CZAR'S GOLD Vodka 16⁹⁹	 <i>El Massaya Authentic Arak</i> 21⁹⁹
 Al Mimas Arak 11⁹⁹	 Al Laytany Arak 375ml 4⁴⁹	 Fakra Arak 17⁹⁹	 Mesrob Mashtots Armenian Brandy 32⁹⁹	 ORA Vodka 13⁹⁹
Ծնունդ է 1924 թ., աւարտել է Երեւանի թատերագեղարուեստական ինստիտուտը, աշխատել է Երեւանի կենտրոնի Սպանդարեանի կոմերիտ Միութեան շրջկոմի Ա. քարտուղար, այնուհետեւ ՀԼԿԵՄ կենտկոմի քարտուղար, նշանակուել է արուեստի գործերի վարչութեան պետի տեղակալ, հայ ֆիլմ-հարմոնիայի եւ հայ համերգի գլխավոր տնօրէն աւելի քան 14 տարի, Հայֆիլմ կինոստուդիայի գլխավոր տնօրէն, կինոյի բնագաւառի մի շարք բարձր պաշտօններ, որոնց միայն թուարկումը շատ ժամանակ կը խլի: Թուարկածս եւ յետագայ պաշտօններում Գ. Ասատրեանը հանգիստ, խաղաղ կեանք չի ունեցել, այլ յաղթահարել է բազմաթիւ բարդ, գրեթէ անհնարին թուացող գործեր եւ ցուցաբերելով բազմաթիւ համարձակ նախաձեռնութիւններ, դրանցից մի քանիսը՝ նրա շնորհիւ արուեստի մի շարք համոյթներ եւ բազմաթիւ արուեստագէտներ, երգիչ-երգչուհիներ առաջին անգամ հնարաւորութիւն ունեցան արտասահման շրջագայութիւններին եւ հիւրախաղերին: Ծննդալից էր երգի եւ պարի, պետական համոյթների բազմաթիւ հիւրախաղերը, որոնք եւ դարձան ՍՍՀՄ-ի եւ աշխարհի ամենաճանաչուած եւ սիրուած կոլեկտիւններից:

Գ. Ասատրեանը հեղինակեց եւ յաջողութեամբ բեմադրեց Հայաստանում «Ոսկէ Աշուն» հիանալի փառատոնը:

Գ. Ասատրեանի մեծ ծառայութիւնները Արուեստի եւ մշակույթի բնագաւառներում բարձր գնահատուեց եւ նրանց շնորհուեց «Արուեստի վաստակաւոր գործչի» կոչում:

Խիստ կարիք կար բարձրացնելու երկրի սպորտային կեանքը եւ որոշուեց նրան նշանակել Հայաստանի սպորտ կոմիտէի նախագահ: Այստեղ էլ նա շարունակեց իր համարձակ նախաձեռնութիւնները, որոնցից ամենանշանակալիցներէն էր Ծաղկաձորի միջազգային համալիրը, (ի դէպ նրա կառուցմանը վիճարկում էր ՍՍՀՄ-ի վեց հանրապետութիւններին) Գ. Ասատրեանի ջանքերի շնորհիւ նա կառուցուեց Ծաղկաձորում եւ դարձաւ աշխարհի ամենալաւագոյն սպորտ բազաներից մէկը, որտեղ, այսօր էլ մարզում են բազմաթիւ երկրների սպորտսմեններ:

Գ. Ասատրեանը մեծ վաստակ եւ նեցուկ ունեցաւ նաեւ «Արարատ»-ի բարձրագոյն լիկա փոխադրուելու համար Ղազարխանի «Կայրաթ»-ի հետ Գորգնիում կայացած վճռական պայքարում յաղթանակի (2:1) եւ փոքր ոսկէ մեդալների արժանանալու, որը հիմք ծառայեց յետագայի փայլուն յաղթանակների եւ Արարատի-73-ի համար: Հարկ չկայ նաեւ թուարկել միւս յաղթանակների եւ նրա այդ գործերում վաստակի մասին:

Կառավարութիւնը բարձր գնահատեց Գ. Ասատրեանի ծառայութիւնները եւ նրան շնորհեց «Ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակաւոր գործչի» պատուաւոր կոչումը: Գ. Ասատրեանը, երեւի միակն է, որ արժանացել է 2 կարգու բնագաւառների «Վաստակաւոր Գործչի» կոչում: Կարծում եմ որ

եթէ նա տեղափոխուէր մի այլ բնագաւառ, համոզուած եմ, որ այնտեղ էլ նա կ'արժանանար «Վաստակաւոր Գործչի» կոչման:

Գ. Ասատրեանի նոյնիսկ համառոտ կենսագրութիւնը կամ բնութագիրը շարագրելը տասնեակ էջեր կը պահանջէր: Իմ այս համառոտ բնութագիրը Գ. Ասատրեանի մասին, որպէս մեր ազգի ամենավաստակաւոր հայի, մեծատառով մարդու, համոզուած եմ, կը վկայեն իմ սերնդի հազարաւոր մտաւորականներ, արուեստի, մշակույթի գործիչներ, սպորտի եւ այլ բնագաւառների ներկայացուցիչներ, ամբողջ հասարակութիւնը:

ԳՈՐԾԻ ԷՈՒԹԻՒՆԸ

Գ. Ասատրեանի թոշակի անցնելուց յետոյ նրա թեկնածութիւնը առաջադրուած է «Երեւանի պատուաւոր քաղաքացու» կոչմանը:

«Այ քեզ գարմանք»:

Երեւանի քաղաքապետ Երուանդ Զախարեանը մերժում է «Բաւարար վաստակ չունենալու» պատճառաբանութեամբ:

Հիմա ընթերցողին կը թուայ, թէ ես «մի բաժակ ջրում փոթորիկ եմ ստեղծում, թէ այս փոքրիկ թուացող պատմութիւնից մեծ աղմուկ եմ բարձրացնում»: Համաձայն չեմ:

Նախ Երուանդ Զախարեանը եթէ իրականում չի ճանաչում Գ. Ասատրեանին նրա հարուստ վաստակը հայ ազգին, ուրեմն որտեղ եւ ինչ է աշխատել նա, որ անտեղեակ է մեր երկրի մշակութային կեանքից, արուեստից, սպորտից եւ նրա վաստակաւոր կազմակերպիչներից, ուրեմն ինչով է զբաղուել նա եւ ինչպէս է դարձել Երեւանի քաղաքապետ: Այս հարցերի ուսումնասիրութիւնը թողնում եմ լրագրողներին: Սակայն ինչ իրաւունքով է նա միանձեայ մերժում Գ. Ասատրեանին «Երեւանի պատուաւոր քաղաքացու» կոչումը, որը նա վաղուց արժանացել է 60 տարուայ վաստակած աշխատանքով: Զախարեանը վիրաւորում է նրա պատուարժան անունը, նա արհամարում ու վիրաւորում է մի ամբողջ սերունդն, որ տեսել ու յաղթել է Բ. համաշխարհային պատերազմ, բանի տեղ չի դնում արուեստի, մշակույթի, սպորտի հասարակութեան կարծիքը եւ այս բոլորը օրը ցերեկով բոլորի աչքի առաջ:

Ամենեւին չցանկանալով մագաչափ վիրաւորել քաղաքում ճանաչուած անեկդոտ ասող, այժմ արդէն վաստակաւոր դերասան եւ «Երեւանի պատուաւոր քաղաքացի» Աշոտ Ղազարեանին հարցնել այս ամէնին մասին: Կարծում եմ Աշոտը խիստ կը զարմանայ եւ մի անեկդոտ էլ կը նուիրի Զախարեանին, աւելացնելով «Այ քաղաքապետ դա անեկդոտից բացի ուրիշ արուեստ չգիտես...»

Անարդար է անհասկանալի, վիրաւորական... Սարսափով սկսում ես մտածել. «Միթէ՞ քաղաքապետարանն էլ են սեփականաշնորհել»... Զարմանալու առիթ չկայ, քանզի երկրի արդարադատութիւնը, իրաւագիտութիւնը եւ գլխավոր դատախազութիւնը նոյնպէս սեփականաշնորհուած են: Այլպէս սեփականատէր Աղուանը ինչո՞ւ նախագահին չի օգնում ձեւակերպելու քաղաքական մի քանի տասնեակ բանտարկաններին համաձայնութիւնը կամ արդէն երրորդ տարին բանտում «Ժամանակ» Երեւան թերթի գլխավոր խմբագիր, պրոֆեսիոնալ հեռուս-

տաժամի պատասխանատու Արման Բաբաջանեանը, 50 Մարտի 1-ի դէպքերին չի մասնակցել, իսկ Լոս Անճելոսի հայութիւնը գրկուել է ամենատրակեալ լրատուութիւնից: Միծաղելի է «բանակում ծառայելուց խուսափելու» պատճառաբանութիւնը ակներեւ քաղաքական հայեացքների միակ պատճառը: Ինչո՞ւ Արմանի նկատմամբ չի կիրառուել օրէնքով նախատեսուած տուգանքը (ի դէպ այն վաղուց վճարուած է), կամ կալանքից վաղաժամ ազատելու մասին բազմաթիւ ներկայացուած խնդրագրերը: Գուցէ բա՞ւ է վրէժխնդրութեանը, որ անյայտ է արդարադատութեանը:

Ազգի մեծերի մասին խօսելիս, ցաւով ուզում եմ նշել աշխարհահռչակ մաթեմատիկոս Երեւանի մաթեմատիկական հաշուիչ մեքենաների ինստիտուտի հիմնադիր, ակադեմիկոս Սերգէյ Մերգէլեանի անփառունակ ճակատագրի մասին, որ երկար տարիներ երկրի ղեկավարութեան յանցագործ անտարբերութեան շնորհիւ մոռացուած, օտար ափերում գաղթականի կարգավիճակով, հիւանդ, անօգնական վախճանուեց եւ տեղափոխուեց ոչ իր Հայաստան աշխարհ այլ Մոսկուա որտեղ եւ կայացաւ այդ մեծ հայի թաղումը: Նրա հոգեհանգիստը կայացաւ Կլէնտէյլի մի փոքրիկ եկեղեցու սրահում, որտեղ չբարեհաճեց ներկայ լինել նաեւ Լոս Անճելոսի հիւպատոսը:

Մերգէլեանին սիրում ու գնահատում էր հայ ժողովուրդը, որ նրա հիմնադրած ինստիտուտը որ տարերայնօրէն անուանել էր «Մերգէլեանի ինստիտուտ»:

Թէկուզ այսօր անհրաժեշտ է որ իշխանութիւնները պաշտօնապէս օրինականացնեն այս անուանումը (եթէ այդ ինստիտուտից դեռ որեւէ բան մնացել է, եւ շէնքի առջեւ կանգնեցնել Մերգէլեանի կիսանդ-

րին: Կարծում եմ որ մեծն Վիկտոր Համբարձումեանի 100-ամեակի կապակցութեամբ տեղին ու ժամանակին է ՀՀ ազգային ակադեմիայի առջեւ տեղադրել նրա կիսանդրին կամ յուշարձանը: Համոզուած եմ ինձանից բացի շատերը, նաեւ իշխանութիւնները այս ամէնը ծրագրած լինեն, սակայն աւելորդ յիշեցումը օգտակար է:

Ես երկար տարիների փորձով հին երեւանցի ասելիքներ շատ ունեմ յանցագործ վրիպումների եւ խախտումների մասին, եւ եթէ իւրաքանչիւր հայ բացառապատի գոն մէկ խախտում, եւ որ ամենակարեւորն է դրանք վերացուեն երկիրը այս խառնաշփոթից դուրս կը գայ:

Հին երեւանցու իրաւունքով, մի բան էլ ուզում եմ ասել նախագահին.

Եթէ հրաշքով ես քո տեղը լինէի, այս բարեկամական խորհուրդները որոնք ընդամէնը մի փոքրիկ մասն են ընդհանուր խախտումների, կը ցուցակագրէի ըստ կարեւորութեան եւ անմիջապէս կը ձեռնարկէի դրանց անվերապահ կատարմանը: Թող այս ամէնը մեր մէջ մնայ, թէ չէ ընդդիմութիւնը, առաւել Ազգային Կոնգրեսը ինձ կը դատապարտէին իմ օգտակար խորհուրդներով ձեզ աջակցելու եւ իշխանութեան հիմքերը ամրապնդելու մեղադրանքով:

Յոյսով եմ ձեր լիազօրութիւններով ոտքի կը հանէք քաղաքապետարանի, մշակույթի նախարարութեան, գլխավոր դատախազութեան եւ բոլոր նրանց, ովքեր պատասխանատու թիւն ունեն այս շարադրանքներում եւ անյետաձգելի առանց ուշացման շտկել իրավիճակը, որ կարծում եմ նոր լիցք կը տայ ժողովրդավարութեան զարգացմանը Հայաստանում:

ԵՐԿԱԹ ՄԱՐԳԱՐԸ

Ռ. ԿՈՐԻՆ

Այդ օրը՝ աշխատանքի երկու- շաբթի Դեկտեմբերեան օր էր, միու- թիւնը ըստ սովորականի դռները բաց սպասում էր միութենականնե- րին, որոնք ոչ խիտ այլ՝ հատ ու կենտ, որոշները ձեռնափայտով, ու- րիշները դանդաղ քայլերով, իրար յաջորդելով յաճախում էին կէսօր- եայ ժամանակ անցկացնելու միու- թեան շրջափակում: Ծերահասակ- ներ՝ անցեալի յուշերով բեռնաւոր- ւած, գալիս էին մենակութեան ձանձրոյթը թօթափելու մտադրու- թեամբ եւ գրուցակցի կամ խաղա- դակցի ընկերակցութեամբ ժամեր անցնելու միութեան յարկի ներքոյ: Նրանք իրենց զբաղմունքի հարա- գատ տունն են համարում միու- թիւնը, ուր մասամբ միխթարու- թիւն են գտնում:

Գրասենեակումս զբաղւած էի աշխատանքով, յեղակարծ մեր ան- դամներին մէկը հնչեղ բարի լոյսով հանց գարունքը աւետող հաւքի նման իմ ուշադրութիւնը գրաւեց, գլուխ բարձրացնելով տեսայ պրն. Մարգարն է, հայեացքս դէպի նա ուղղելով պատասխանեցի նրա բա- րի լոյսին աւելացնելով.

«Պրն. Մարգար այսօր քո բարի լոյսը շատ կարկաչուն թոնով էր, ժայռից բխող ջրի ուժգնութեամբ, ինչպէս հայեացքիդ պատկերն է ցոյց տալիս՝ գուարթութիւն են ցոլում, անշուշտ ինձ եւս համակեց, լաւ է այսպէս ժպտուններես, քանի որ ու- րախութիւնը սրտի ուժ է եւ կեանքի երկարութիւն, լա՛ւ, ասա՛, ինչ կայ, արտակարգ բա՛ւն է պատահել այդ արձակուրդ օրերին.

«Այո՛, մի շատ անակնկալ եւ անսպասելի բան, կեանքիս բացա- ուիկ դէպքերից ամենանշանակալին որ երբեք ոչ մտքովս էր անցնում եւ ոչ հղպէս բան գուշակում.

«Միթէ ինչ հրաշք է պատահել, որ այսպէս ոգեւորւած ու դէմքով պայծառացած միութիւն են եկել.

«Ինչպէս ասեմ, ինչպէս պատ- մեմ, հրաշալի եւ անմոռանալի մի գիշեր, երախտագիտութեան եւ ար- ժեւորման հանդիսութիւն, նէշներ, ջերմ սիրոյ զգացումներ, ողջագու- րումներ եւ համբոյրներ.

«Ինչ է, որ այսպէս հիացած ես ու զմայլւած, դէ՛հ, պատմի՛ր, մեզ դըղ մարդ արեցիր (վշտամահ արե- ցիր, սպանեցիր).

«Հիմա որ էսպէս հետաքրքր- ւած ես, կը պատմեմ: Անցեալ շաբաթւայ կիրակի օրն էր, կէսօրից յետոյ, օղը ցուրտ էր, արեւը ծածկ- ւել էր կապարագոյն ամպերով, տխուր էր երկինքը, տխուր էի եւ ես, մենակ էի տանը, իբր թէ հեռուստացոյց էի նայում, սակայն միտքս ուրիշ տեղ էր բանում, անցեալն էր եկել աչքե- րիս առջեւը, սուզւած մտածումնե- րի մէջ, բացում էր կծիկը էն մանուկ օրերիս գիւղական կեանքից սկսեալ: Յիշում էի մանկութեանս անյոյս ու որբ օրերը, թէ ինչպէս չորս տարեկանում հօրս կորցրի, մայրս էլ ինձ թողեց մեծ մօրս յոյսին եւ հեռացաւ՝ ուրիշի հետ ամուսնա- նալով, բայց ինչ մայր, մի մայր որ իր սրտահատոր գաւակին լքի, այ- լեւս մայր չէ դա, լաւ է ասել Պարոյր Սեւակը, թէ՛՝ «Ամէն բանաստեղծ գրող չի, ամէն կին էլ մայր չի: Չուրկ ծնողական գուրգուրանքից ու պաշտ- պանութիւնից, ծառից վայր ընկած ձազի պէս սրա ու նրա պտղունցնե- րով անհէրնումէր մեծացել, նոյնիսկ գիւղական դպրոցի եւ ուսման երես չտեսայ: Հիմա որ մտաբերում եմ

գլխովս անցած այդ օրերը, աչքերս արցնակալում են, զարմանում եմ, թէ ինչպէս՝ այդ խեղճ ու անօգնական պայմաններում անառակ մէկը չեմ դարձել եւ շիտակ ճամբով եմ գնա- ցել, վատահօրէն բարի ոգիները ինձ ուղեցոյց եւ պաշտպան են կանգնել.

«Ես կուհնում եմ, որ շրջապա- տումդ բարեմիտ մարդիկ են եղել, որոնք խղճալով քո որբութեանը՝ քեզ վրայ հսկել, խրատել եւ կեանքի բարի ճանապարհներ են առաջնոր- դել .

«Չեմ հակառակում ասածիդ, այո՛, շրջապատը մեծ դերակատա- րութիւն ունի, բայց մի բան պէտք է պարզ լինի, որ ենթակալից էլ կախում ունի: Այստեղ կուզեմ յիշա- տակել, որ մեծ մայրս եւ վարպետս անուրանալի դեր են ունեցել իմ մարդակերտումի դաստիարակու- թեան մէջ, եթէ իմ խօսքերով քեզ չեմ խանգարում, թող ասեմ.

«Ո՛չ, չեմ խանգարում, այլ հետաքրքիր է լսել քեզ.

«Պատանի տարիքում գիւղից թեհրան փոխադրելով դարբնի արհեստի ուղարկեցի, վարպետի կոշտ ու կոպիտ վերաբերմունքը, ծեծն ու հայհոյանքները տանելով դարձայ վարպետ-դարբնագործ, դէ՛հ, էն ժամանակուայ վարպետ- ները համոզւած էին, որ դա է կարգը աշկերտ պահելու եւ սովորեցնելու: Վարպետ Յակոբի խստութիւնները եւ սրտցաւութիւնը իսթան դարձան իմ մարդավայել ապագայ կեանքին: Չօր ու գիշեր դատելով տուն-տեղ դրեցի, ընտանիք կազմեցի, գաւակ- ներ ունեցայ, նրանց ուսման տւի, ամուսնացրի, փառք Տիրոջ նրանք իրենց գործով ապահով կեանք են ապրում, սակայն մի բան որ ինձ տանջում է իմ արածի նկատմամբ մերոնց անտարբեր լինելն է, ոչ ծնունդ եմ իմացել ինչ է, ոչ՝ ամուսնութեան տարեդարձ, իմ արա- ծը նկատել է որպէս պարտականու- թիւն, եւ ոչ թէ գոհողութիւններով նւիրւածութիւն: Չաւակ ենք ունե- նում, որ մեր յարգ ու պատիւն իմանայ, մեր ցաւն ու դարդը իմա- նայ, չէ որ նրանք են՝ «Տան շէն պահողներն ու պանծացողները»: Կեանքս եղել է աշխատանք ընտանի- քի նիւթական պահանջները տեղն անելով: Մանուկ հասակից աշխա- տել եմ մինչեւ նախքան ԱՄՆ գալս, որը կատարեց գաւակներին պա- հանջով, չարչարանքով դատածս ու շահածս ջուրը թափեցի եւ կողակի- ցիս հետ միասին իրենց միացանք ԱՄՆ-ում, ահա այս տարիքին եմ հասել, այս խառնարան երկրում, անհարագատ երկրում իմ ծերու- թիւնն եմ ապրում:

Մարգարի կենսագրութեան քիչ թէ շատ արդէն տեղեակ էի նախա- պէս ինձ պատմած լինելով: Նա 84 տարեկան է ծնունդով Իրանի Փէրիոյ գաւառի Սընզըրդ գիւղից, հագիւ ինքնաշխատութեամբ գրաճանաչ է դարձել թէ՛՝ հայերէն եւ թէ՛՝ պարս- կերէն: Անասելի նեղութեամբ սե- փական գործ է դրել, երեք գաւակ- ների հայր՝ երկու տղայ եւ մի աղջիկ, թողնել ունի, բոլորը գտնուում են ԱՄՆ-ում, նը-րանք աւելի շուտ են գաղթել ԱՄՆ եւ պատճառ դարձել ծնողներին իրենց միանա- լուն: Մարգարը թէեւ հասակով կարճ է, սակայն լեցուն կազմւածք ունի, նա այնքան կուսով երկաթ- ներ է կուլ ու հարւածել, որ թիկնեղ մարդիկի տեսք է ստացել, փարթամ թզուկ մայրենու պէս, ֆիզիքայէս մարմինը կուխած երկաթի պէս կարծր ու ամուր: Մի օր ձեռքի

ուժը փորձելու համար, ուզեցի չափ- ւել հետը ասելով.

«Պրն. Մարգար մէկ ձեռքդ տուր փորձեմ քո ուժը:

Ախ ու վախով հագիւ ձեռքս ազատեցի նրա ջլապինդ մատների ճնշումից, նա այդ տարիքում գրեթէ պահում է մարմնական գորութիւնը, նրան՝ ուժի եւ գործի պատճառով, յորջորջել են՝ երկաթ Մարգարը, որպէս ճանաչողութիւն իր բացակա- յութեան մականունով են կոչում: Վաթսուն երկար տարիներ կուսը սալին խփել՝ չարը խափանալու համար, ծանր մեքենաների երկաթէ յարմարանքները սարքաւորել, այս- պիտով նա արդար վաստակով ըն- տանիք է պահել, որը իրօք հերոսու- թիւն է եւ գնահատանքի արժանի: Նա նոյնիսկ տարրական ուսում չի ստացել, սակայն որպէս մարդ շատ արժանիքներ ունի, որոշ կրթւած- ներից շատ աւելի մարդկայնօրէն է մտածում: Դրանով հանդերձ որ կեանքը երկաթի հետ է անցել, երկաթի հետ մերւած, երկաթից է հաց հանել, նա առողջ ընտանիք է պահել, չարից խուսափող, բարուն պաշտպան: Երկաթը նրա հոգին չի փոխել, նա մարդկային զգացումնե- րով մնում է նուրբ ու փխրուն, զթասիրտ ու խղճող: Մի օր ուրիշի համար գործով դիմեց ինձ.

«Միտքի էդուարդ այս մեր ծա- նօթի թղթերը լրացրու եւ ուղար- կիր, նա նոր է եկել, գրել-կարդալ չի իմանում, կարիք է, որ օգնենք:

Աւանց այլեւայլի կատարեցի նրա ցանկութիւնը, նա խղճմտան- քից մղելով ինձ էր դիմել, այս փոքրիկ օրինակը ապացուցում է նրա հոգու ծալքերում դրոշմւած մարդասիրական գթասրտութիւնը:

Մի ուրիշ անգամ էլ վուզ գրասենեակ մտաւ եւ խնդրեց շտապ օգնութիւն կանչեմ, եղելութիւնը հարցրի իրենից թէ.

«Միութիւնից տուն գնալիս տե- սայ մի սեւական մարդ գետնի վրայ երկարած, խղճացի, չէր կարելի

այդպէս թողնել եւ հեռանալ, մարդ ենք էլի, զգացում ունենք, խելք ունենք, պէտք է իրար օգնենք, տեսայ, նա շարժում է, ցաւից տնքում է, բայց ձայնը դուրս չի գալիս, էդ ա վագել եմ քո մօտ շտապ օգնութիւն կարգադրես, շուտ արա՛, հեռախօսի, գուցէ կարողանանք փրկել նրան:

Հրչէջի մեքենան ահագանգով եկաւ եւ տարաւ այդ մարդուն:

Նա դպրոցի երես չի տեսել, Հայաստանի մասին գիր ու գրակա- նութիւն չի կարդացել, ողջ կեանքը աշխատանքի բերումով պարսիկնե- րի մէջ է եղել: Պարսիկներ են եղել իր յաճախորդները, ամբողջ օրեայ շփոթները: Գործատեղին գտնուում էր Ղալէ Մորդի Սարէ Փօլ էմամ Մասում, գուտ պարսիկների շրջա- նում, նրանց հետ կերել-խմել, նրանց հետ կապել եւ յարաբերել, սակայն պահել է իր հայկականութիւնը եւ հայրենասիրութիւնը:

Մի օր Մարգարին հարց տւի.

«Պրն. Մարգար սիրո՞ւմ ես մեր Հայաստան երկիրը.

«Ինչպէս թէ չեմ սիրում, էս իմ անկիրթ տեղովս լաւ եմ հասկանում, որ հայրենիքից սպահով տուն ուրիշ ոչ մի տեղում չեմ կարող ճարել, միշտ հայրենիքի սիրով եմ ապրել ու երագել, միշտ ցանկութիւնս է եղել հայրենիքում ապրել, հայրենի- քում աշխատել, իմ քրտինքս թա- փեմ հայրենիքի համար եւ տեսնել հայրենիքը հօգօր, նա է ինձ գոյատե- ման ուժ տւել, որ պահեմ իմ ազգութիւնը, նրա գոյութիւնը մեր սիրուքահայերիս գոյութիւնն է ապահովում.

«Որ միտք ու հոգիդ այսպէս հայրենիքով է դատում, եւ այսպէս հայրենասէր ես, ինչո՞ւ չեմ գնացել հայրենիքում ապրել.

«էս լամագհաբ (անկրօն, ան- հաւատ) երեխէքը պատճառ դարձան որ էստեղ գանք, կտրւենք մեր

Շաբ.բ էջ 17

Arvest Night

For Tickets ~ Please Call
626-794-7942

Sunday ~ November 16, 2008 ~ 6:00PM

AGBU PASADENA CENTER
2495 E. Mountain St. ~ Pasadena CA 91104

11th International Armenia Fund

Telethon 2008

November 27, 2008 Thanksgiving Day



My home, Armenia



KSCI LA 18 8am-8pm PST Check Local TV Listings or Call **1-800-888-8897**

Webcast www.armeniasfund.org

ՅՈՒՇԵՐ

«ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐ»Ի ՇԱՐՔԻՑ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա.Ի. ՔՀՆՅ. Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ-ԲԱԼԱՅԵԱՆ

ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԻՐԱՆ
 1941 թվականի Օգոստոսի վերջերին, շփոթ եւ խուճապ ստեղծուեց ամբողջ երկրում, այդ թվում եւ Ղազուխում: Արդէն լուրեր էին տարածուել, որ Սովետական բանակը հրահրեց, իսկ Անգլիական զորքը հարակից, մուսուլման գործերը իրան: Խուճապի էր մատնուած նաեւ դադուխնահայութիւնը: Այդ օրերին Ղազուխի երկնքում երեւացին Սովետական 3 ինքնաթիռ, որոնք մի քանի ռումբեր նետելով քաղաքից դուրս այգիներում՝ հեռացան, նոյնը կրկնուեց մի քանի օր: Հայութիւնը քաշուեց Ղազուխին մօտիկ գիւղերը Ղազիմաբադ, Ռաշթաղան եւ Աբդուլաբադ: Պարսիկ ժողովուրդը եւս քաշուեց շրջակայ գիւղերը: Պաշտօնիս բերումով շրջում էի հայաբնակ թաղերում ու յորդորում ժողովրդին որ խուճապի չմատնուեն: Գիւղերուայ ու ժամին, երբ քայլում էի եկեղեցուն եւ դպրոցին մօտիկ պողոտայում, մի խումբ պարսիկ կանաչ սարսափահար մօտեցան ու նրանցից մէկը լացակումած դիմեց ինձ - Քէշիշ աղա, բա՛ ի՞նչ անենք, ո՞ւր գնանք, ռուսները մեզ կը կոտորեն... Բացատրեցի իրենց, որ նրանք ժողովրդին չեն դաշնու, նրանք մեր երկիրն են մտնում որ աւելի լաջն միջոցներ եւ հնարաւորութիւններ ունենան կոտելու մարդկութեան թշնամի Հիթլերի դէմ: Խառնակ այդ օրերին, ամբողջ մտահոգութիւնս եկեղեցին էր, ու վախենում էի խուճանի կողպուտից: Ղազուխահայերը քաշուել ու եկեղեցու բակում մնացել էի եւս, ընտանիքս ու դպրոցի գործակատար Նշան Սաֆարեանը: Պաշտպանուելու միջոցից խուճանի հաւանական յարձակման դէմ գուրկ էի: Հողի տակից դուրս բերի տարիներ առաջ պահած տասնոց (մազեք) ատրճանակս, որն դժբախտաբար ժանգոտել էր: 10-12 ժամ աշխատելուց յետոյ կարողացայ մաքրել, կարգի բերել ու վերցնել հետս: 1941 թվականի Օգոստոս 30ին, կրկին երեւացին Սովետական օդանաւերը, որոնք մի քանի ռումբեր թափելով այգիների վրայ հեռացան Ռաշտի ուղղութեամբ:

Առաւօտեան ժամի 10ին եկաւ Աւետիս Աւետիսեանը եւ միասին դուրս եկանք քաղաք շրջագայելու: Բոլոր խանութները փակ էին, տները լքուած ու դատարկ: Մեռելային լուծիւն էր ամէնուր: Ոմանք ոտքով, ոմանք սայլերով ու աւանակներով շտապում էին քաղաքից հեռանալ: Արդէն լուր առանք, որ Կարմիր բանակը հասել է Թաքտան (Ղազուխից 30 քիլոմետր): Շաբաթ օր էր: Երեկոյան սովորական ժամին հնչեցին եկեղեցու զանգերը եւ սկսեցի կիրակնամուտի արարողութիւնը: Ի գարմանս ինձ, եկեղեցումն էին եկեղեցու մշտական այցելուներ՝ Ծաղիկ Կարապետեան (Ծաղիկ մայրիկ) եւ Թագուհի Հարպանդեանը: Ժամերգութիւնից յետոյ հաւատացեալ մամիկները սուկումով մօտեցան ինձ եւ ասացին - Տէր Հայր, ռուսական զորքերը արդէն մօտեցել են քաղաքին լաւ է որ հեռանաք Ղազուխից: Հաւաստիացրի իրենց, որ որեւէ վտանգ չի սպառնում: Ապա դուրս եկայ փողոց: Դպրոցի մեծ դարպասի մօտ դիտում էի քաղաքի անցողաւորները: Երեկոյեան ժամը 8ին Սովետական առաջահրահայտները եւ գնդացի-րակիր մեքենաները մտան քաղաք,

ու տեղաւորուեցին «Սաբզ մէյդան» հրապարակի շրջակայքում, քաղաքի կարեւոր կենտրոններում եւ պետական հիմնարկներում: Հեռագրատան դիմաց մէկ ռուս սպայ, կանգնած գրահապատի վրայ խօսում ու յորդորում էր ժողովրդին մնալ հանգիստ, քանի որ երաշխաւորուած էր ժողովրդի կեանքը, եւ ունեցուածքը: Յաջորդ օրը պատերը լեցուած էին խաղաղութեան կոչերով, ու Կարմիր բանակի հրամանատարութիւնը պահանջում էր ժողովրդից վերադառնալ իրենց տները, բացել խանութները եւ սկսել առօրեայ կեանքը, որովհետեւ Սովետական բանակը որեւէ ձեռով չպիտի խառնուի ժողովրդի եւ քաղաքի ներքին գործերին: Կոչերով պահանջում էր պետական հիմնարկներին պաշտօնաներից, ոստիկանական եւ ժանդարմական միաւորներից, վերադառնալ իրենց պաշտօնին: Յաջորդ օրը Կարմիր բանակին պատկանող մեքենաները օգնում էին քաղաքից հեռացած ժողովրդին վերադառնալու իրենց տները: Քաղաքը լեցուել էր երթ ու դարձ անող Կարմիր բանակայիններով, որոնց հետ ժողովուրդը շատ շուտ ընտելացաւ, վերացաւ վախն ու սարսափը, ու շուտով սկսեց ժողովրդի բնականոն կեանքը: Խանութները բացուեցին, պետական հիմնարկները եւ գործարանները սկսեցին աշխատել: Կարմիր բանակի սպայակոյտը, որն հաստատուած էր քաղաքապետարանի շէնքում, ամէն օր նորանոր կոչեր եւ հրամանագրեր էր արձակում: Կիրակի Օգոստոս 31ին, կարգադրեցի եկեղեցու տիրացու Մարկոս Տ. Ղեւոնդեանին, որոշեալ ժամին զանգերը հնչեցնել, որ սկսենք սուրբ Պատարագը: Նա դժկամութեամբ ընդունեց եւ առարկեց թէ այս պայմաններում «վտանգաւոր» է Պատարագ մատուցել, քանի որ վախենում էր «բոլշեւիկներից»: Հաւաստիացրի իրեն որ նրանց կողմից որեւէ վտանգ չի սպառնում մեզ, քանի որ նրանք միջամուխ չեն լինում տեղացիների գործերին: Ապա որոշեալ ժամին սկսեցինք Ս. Պատարագը, դատարկ եկեղեցում... Սեպտեմբեր 5ին, շնչասպառ մեր տուն եկաւ ասորի հայախօս Սաւօն, որն 1915 թվականին եղել էր Անդրանիկի կամաւորական գնդերի մէջ, ու ոտքը վիրաւորուել եւ այդ պատճառով կաղում էր: Նա ասաց - Տէր Հայր, Կարմիր բանակի շտաբը յայտարարուել է որ տեղացիները իրենց սառը եւ տաք գէնքերը տանեն եւ յանձնեն: Յարմար է որ յանձնենք: (Սաւօն եւս մի մաւրիցի ատրճանակ ունէր): Խստիւ ընդդիմացայ եւ համոզեցի որ գէնքի յանձնումը սխալ է, միայն պիտի թաքցնել մի սպահով վայրում, թերեւս պէտք լինի մի օր:

ՀԱՅ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐ
 Հետզհետէ քաղաքում բազմանում էր Կարմիր բանակայինների թիւը: Քաղաքի հիւսիսային մասում այգիների եւ ձորերի մէջ էին տեղաւորուած նրանց ձիաւորական ուժերը եւ պահեստները: Բաց ու հարթ դաշտավայրում ամէն օր գինավարժութիւն էր կատարուում: Այդ շրջանները յայտարարուած էին «արգելեալ գօտի», եւ սկսեալ քաղաքի առաջին ջրաղացից մինչեւ լեռները արգելուած էր մօտենալ: Ընդհանուր առմամբ Կարմիր բանակայինների մօտ կարգապահայութիւնը շատ խիտ էր եւ գինուորները քաղաք էին իջնում շաբաթը մէկ անգամ, զանազան գնումների եւ հատ ու

կենտ ծանօթներին հանդիպելու համար: Կարմիր բանակի միաւորների մէջ կային մի քանի տասնեակ հայ սպաներ, հարիւրաւոր շարքային գինուորներ, որոնք ծանօթանալով Ղազուխի հայերին, երբեմն այցելում էին նրանց տները: Մեծ մասամբ գալիս էին տեսնելու մեր եկեղեցին ու դպրոցը: Բնաւ չեմ կարող մոռանալ գնդապետ մշեցի Յակոբին, որն զեղատեսիլ ու ամուր կազմուածքով մի տղամարդ էր: Նա յաճախ այցելում էր ինձ, երբեմն լուռ ու երկիւղած հետեւում էր Ս. Պատարգի արարողութեանը, ու պատմում իր 75 ամեայ մօր յուշերը, 1915 սեւ թուականի կոտորածներից եւ արեւմտահայութեան տեղահանումներից: Նա պատմում էր որ իր հօրը սպանել են թուրքերը, պիտի վրէժը լուծի հայ ժողովրդի ոստիկ: Յակոբի հետ շատ մետրմացանք: Ես էլ պատմում էի վանի հերոսական մարտերից, գաղթներից: Նա լուռ էր ու շարժուածքներ եւ արտասուում: Կիրակի օրերը եկեղեցի էին գալիս հայ գինուորներ, աղօթում ու մոմ էին վառում: Մի օր երբ երգչախմբի հետ փորձեր էի կատարում, Ս. Ծննդեան տօնին երգուելիք «Այսօր ձայն է հայրական» շարականն էի սովորեցնում, եկեղեցի մտան 5 հայ սպաներ, որոնք զգաստ շարուեցին եկեղեցու սիւներից մէկի մօտ: Երբ աւարտեցի փորձը, նրանցից մէկը խնդրեց կրկնել շարականը, որն լսեցին մեծ բաւականութեամբ եւ հաճուցով: Նրանք իրենց գոհունակութիւնը յայտնեցին ու խոստացան միշտ այցելել եկեղեցի: Օրեր յետոյ ծանօթացայ մէկ ուրիշ սպայի Սամուէլ անունով: Սա ձիաւորական վաշտերից մէկի հրամանատարն էր: Ազնիւ հայրենասէր երիտասարդ էր Սամուէլը, որն գինուորական համագործակցով շատ ներկայանալի տեսք էր ստանում: Խօսում էր անխառն սիրով ու ջերմ զգացումներով ու խնդրում էր իրենց տրամադրել Բաֆֆու վէպերը: Իրեն տուի հայ մեծ վիպասանի «Սամուէլ»ը: Կարդաց ու վերադարձրեց գոհունակութեան ժպիտը դէմքին: Ապա ուրիշ գրքեր եւս տուի իրեն: Մի օր ասաց - Տէր Հայր, դուք եւ ձեր տրամադրած գրքերը փոթորկեցին իմ ներաշխարհը, հպարտ եմ իմ հայութեամբ եւ եթէ չընկալ մարտերում, ձեզ պիտի չիչեմ միշտ: Ամիսներ

յետոյ Սամուէլը մեկնեց ռազմաճակատ, ու էլ լուր չառաջ իրենից: Սամուէլի նման հայրենասէր սպաներ ու գինուորներ, շատ կային Կարմիր բանակում:

ԱՂԵՏԱԻՈՐ ԴԷՊՔԸ, ՈՐ ԿԱՐԵՆԻ ԷՐ ԷՄ ԱԻԵԼԻ ԱՂԵՏԱԻՈՐ ԼԻՆԵԼ
 Ինչպէս շեշտեցի նախորդ էջերում, Կարմիր բանակի շտաբը աշխատում էր չմիջամտել քաղաքի ներքին գործերին: Բայց եւ այնպէս նրանք շատ զգուշ էին եւ զգաստ ու պաշարում էին խափանարարների ու խռովարարների դէմ: Սակայն մի դէպք եկաւ խորապէս վշտացնելու ինձ: Մի օր կէսօրից յետոյ ժամի 2ին, մեր տան դուռը թափով բացուեց, ու ներս մտաւ մի ռուս սպայ: Ատրճանակը կողքից հանելով դրեց սեղանի վրայ ու պոռաց - 5 ըրպէ ժամանակ է տրուում, սեղանին դրէք ձեր մօտ եղած գէնքը: Անշուշտ ես չհասկացայ ռուս սպայի խօսքերը: Ինձ օգնութեան եկան եկեղեցու բակում բնակող եւ ռուսերէն լեզուին ծանօթ Մայրանուշ Գրիգորեանը եւ Քրիստինէ Գասպարեանը: Ես հանգիստ տոնով ասացի - գէնք չունեմ, սխալ լուրեր են տուել ձեզ ապա պատուիրեցի տիրուհուն սուրճ պատրաստել: Երբ սուրճը եկաւ սեղանին, սպան գայրացած կրկնեց իր պահանջը: Ես ռուսախօս տիկինների միջոցով պատասխանեցի որ գէնք չկայ ինձ մօտ: Սպան աւելի գայրացաւ եւ ձայնի տոնը էլ աւելի բարձրացաւ ու սպառնալի դարձաւ, բայց այդ վայրկեանին կատարուեց անսպասելի մի բան, որին հաւանաբար պարտական եմ կեանքս: Յանկարծ դուռը բացուեց եւ շէնքին երեւաց մի ուրիշ խորհրդային սպայ, ըստ երեւոյթի մեր անկոչ հիւրը: Նրան տեսնելով, սպանացող սպան այնքան շփոթուեց որ ընդոստ տեղից ցատկելով, թեւով դիպաւ սուրճի բաժակին եւ սուրճը թափեց: Նորեկ սպայի հետ կային 2 պահակ-գինուոր, որ ձերբակալեցին այդ նախադարձակ եւ իմ կեանքին սպառնացող սպային, ու պարզուեց որ ինքնապուխ քայլ էր նրա արածը - մտնել քահանայի բնակարանը գէնք պահանջել: Անուշտ այդ կատարուել էր իմ հակառակորդ պրովոկատորի միջոցով, որն զրգուել էր այդ սպային:

THE PERFECT CHRISTMAS GIFT!
 Tell Me about Armenia

By Terri Lyn Eshilian

Here is a book you can read to your child which explains "Armenia" is more than just a word. It is a rich land with a proud heritage. The perfect gift to expand the horizons of the next generation!

Contact: Knee Hye Children's Books
 P.O. Box 2645
 La Jolla, CA 92038-2645
www.kneehye.com web
info@kneehye.com email
 (858) 750-8365 phone

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ
ՎԵՐՁԻՆ ՏՈՒՐԻ «ՓԻԼԻՍԿ» - «ԱՐԱՐԱՏ» ՀԱՆԴԻՊՈՒՄԸ
ԿԸ ՈՐՈՇԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՅԵԱՆԸ

Ֆուտպոլի Հայաստանի առաջնության 27-րդ տուրում առաջատարները հերթական յաղթանակները տոնեցին: Վերջին 28-րդ տուրից առաջ արտյան դառնալու հնարավորություններ ունեն «Փիլնիկ»ը եւ «Արարատ»ը: Նախորդ 7 տարիներին «Փիլնիկ»ը արտյանի կոչումը նուաճել էր նախքան վերջին տուրը:



27-րդ տուրում «Փիլնիկ»ը հիւրընկալել էր ետնապահ «Կիլիկիա»ին: Այս խաղում առաջատարը ինդիերներ չունեցաւ՝ յաղթելով 3:1 հաշուով: Առաջին կեսում էրգար Մալաքեանի 11 մեթրանոցը անվրէպ իրացրեց Սարգիս Յովսէփեանը: 2-րդ կեսում «Փիլնիկ»ի յաջողութիւնը ամրապնդեցին Գեէորգ Լազարեանը եւ Ալբերտ Թադեւոսեանը, որոնք ընթացիկ առաջնութիւնում արդէն 8-ական գնդակ են ուղարկել մրցակիցների դարպասը:

«Կիլիկիա»ն մրցավարի աւելացրած ժամանակահատուածում վաստակած 11 մեթրանոցի շնորհիւ «շրջեց» հաշիւը:

«Արարատ»ին անհամեմատ լուրջ փորձութիւն էր սպասուում այս տուրում: Սուքիասեանի սաները Աբովեանում հիւրընկալել էին վերելքի մէջ գտնուող Կապանի «Գանձասար»ին: Խաղը անցաւ բաւական լարուած մթնոլորտում եւ «Արարատ»ը յաղթեց 2:0 հաշուով: Հանդիպման գլխաւոր մրցավար Արարատ Ճաղարեանը այս խաղում խաղադաշտից հեռացրեց «Արարատ»ի ողջ մարզական շտաբին Վարուժան Սուքիասեանի գլխաւորութեամբ:

3-րդ տեղում գտնուող «Գանձասար»ը այս պարտութիւնից յետոյ չնահանջեց, քանի որ 4-րդ տեղում ընթացող «Միկա»ն 0:1 հաշուով զիջեց «Ուլիս»ին: Իսկ «Բանանց»ը 3 անպատասխան գնդակ ուղարկեց Գիւմրիի «Շիրակ»ի դարպասը:

Այսպիսով՝ վերջին տուրից առաջ առաջնութեան առաջին հորիզոնականներում բաւական խճճուած իրադրութիւն է: «Փիլնիկ»ը 59 միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակը, իսկ «Արարատ»ը 56 միաւորով 2-րդ տեղում է: 28-րդ տուրում այս թիմերը մրցելու են միմեանց հետ եւ յաղթանակի դէպքում «Արարատ»ը կը հաւասարուի առաջատարին: Եթէ առաջնութեան աւարտից յետոյ արտյանութեան համար պայքարող թիմերը հաւասար միաւոր են ունենում, ապա նշանակուած է լրացուցիչ՝ «ոսկէ» հանդիպում:

- «Փիլնիկ» - «Կիլիկիա» 3-1
- «Արարատ» - «Գանձասար» 2-0
- «Բանանց» - «Շիրակ» 3-0
- «Ուլիս» - «Միկա» 1-0

27-րդ տուրից յետոյ մրցաշարային աղիւսակը ունի այսպիսի տեսք.

	Խաղ	Ցաղ.	Հաւ.	Պարտ.	Կօլ	Կէտ
«Փիլնիկ» Երեւան	27	18	5	4	40-17	59
«Արարատ» Երեւան	27	17	5	5	47-23	56
«Գանձասար» Կապան	27	13	7	7	39-27	46
«Միկա» Աշտարակ	27	13	6	8	37-27	45
«Բանանց» Երեւան	27	11	7	9	33-24	40
«Ուլիս» Երեւան	27	7	7	13	19-29	28
«Շիրակ» Գիւմրի	27	4	4	19	14-40	16
«Կիլիկիա» Երեւան	27	2	5	20	21-63	11

ԲՈՆՑՔԱՄԱՐՏ
ԱՐԹՈՒՐ ԱՐԱՅԱՍԸ ՈՒԹԵՐՈՐԴ ԱՆԳԱՍ
ՊԱՇՏՊԱՆԵՑ ԱՆՈՅԵԱՆԱԿԱՆ ՏԻՏՂՈՍԸ

IBF-ի վարկածով միջին քաշային կարգում աշխարհի արտյան Արթուր Աբրահամը 8-րդ անգամ յաջողութեամբ պահպանեց արտյանական գօտին: Այս անգամ Գերմանիան ներկայացնող հայ բռնցքամարտիկը առաւելութեան հասաւ մեքսիկացի Ռաուլ Մարկեսի նկատմամբ:



Մրցամարտից առաջ էլ բացայայտ ֆաւորիտ էր համարուում Աբրահամը, որը առաջին ռաունդներում մեծ առաւելութիւն ունէր եւ ստիպեց մրցակցին 6-րդ ռաունդում յանձնուել: Ստացած ուժեղ հարուածներից յետոյ մեքսիկացի մարզիկը 6-րդ ռաունդում հրաժարուեց շարունակել մրցամարտը: Մարկեսի որոշումը անսպասելի էր Արթուրի համար. «Նա լաւ բռնցքամարտիկ է, բայց ես էլ վատը չեմ: Ես չհասկացայ, թէ ինչու նա նման որոշում կայացրեց: Շատ շուտ յանձնուեց: 6-րդ ռաունդից յետոյ ես մտադիր էի աւելացնել, բայց, ցաւօք սրտի նա թոյլ չտուեց դա անել: Մարկեսը հրաժարեցրեց հանդիսականներին»:



Իսկ Մարկեսը յայտարարել է, որ ստիպուած էր հրաժարուել մրցամարտից. «Նա շատ արագ էր, իսկ նրա հարուածները դիպուկ: Առաջացաւ մի իրավիճակ, երբ ես չէի կարող շարունակել մրցամարտը: Ես տեսայ, որ պարտուում եմ: Նա ուժեղ արտյան է, եւ ես ոչինչ չկարողացայ անել: Հրաժարուեցի յետագայ պայքարից՝ մտածելով իմ ապագայի մասին: Ես ունեմ ընտանիք, երեխաներ»:

Արթուր Աբրահամի անձնական հաշուում գրանցուեց 28-երորդ անընդմէջ յաղթանակը՝ որոնցից 22-ը աւարտուել է նոկաուտով: Այս յաղթանակից յետոյ Արթուր Աբրահամը մարտի է հրաւիրել WBA վարկածով միջին քաշային կարգում աշխարհի արտյան Ֆելիքս Ստրամին:

ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ԵՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Բռնցքամարտի Եւրոպայի առաջնութիւնում աւարտուած են նախնական փուլի հանդիպումները: Լիվերպոլում ընթացող առաջնութիւնում Հայաստանի ներկայացուցիչներից, 64 կգ քաշային էդուարդ Համբարձումեանը հերթական յաղթանակն է տօնել:

Առաջին փուլում էդուարդը յաղթել էր Ուկրանիայի ներկայացուցիչ Դենիս Լազարեւին, իսկ 1/8-րդ եզրափակիչում Համբարձումեանի մրցակիցը լիթվիացի էգիդիուս Կավալիտուսկան էր: Հայ բռնցքամարտիկը յաղթեց 6:3 հաշուով եւ դուրս եկաւ քառորդ եզրափակիչ:

75կգ քաշային Անդրանիկ Յակոբեանը 1/8-րդ եզրափակիչում մրցեց լեհ Դարիուշ Սեկի հետ: Այս մրցամարտը եւս անցաւ հաւասար պայքարում: Հայ բռնցքամարտիկը առաւելութեան հասաւ 5:4 հաշուով եւ նուաճեց քառորդ եզրափակիչի ուղեգիր:

91 կգ քաշային Յոլակ Անանիկեանը 1/16-րդ եզրափակիչում յաղթել է Յունաստանի ներկայացուցիչ Իլիաս Պավլիդիսին: 1/8-րդ եզրափակիչում Յոլակը 8:3 հաշուով առաւելութեան հասաւ լիտվացի Վիտալիուս Սուբացիուսի նկատմամբ:

Առաջիկայ պայքարի մէջ չեն մտել 48 կգ քաշային Յովհաննէս Դանիէլեանը, որ հանդէս կը գայ միանգամից քառորդ եզրափակիչից:

Այսպիսով Հայաստանը 9 ներկայացուցիչներից պայքարը շարունակող 4 բռնցքամարտիկներն արդէն քառորդ եզրափակիչում են եւ այս փուլում յաղթանակի դէպքում առնուազն բրոնզէ մեդալով կը վերադառնան Անգլիայից:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԳ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑԸ
CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱՔՐԵՍԵՆԹԱ)
GLOABCAST SATELLITE
ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՔԱՉՆԱՉԱՐ
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:30
Կլէնտէյլի 280-րդ կայանից

www.massisweekly.com
massis2@earthlink.net

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...

Մեծ Ժողովրդականութիւն Վայելող
Կլէնտէյլի AMGA 280-րդ Ալիքը
Այժմ Կը Սփռուի
GlobeCast
Արբանեակային Հեռատեսիլով
Ամերիկայի, Գանատայի եւ Մեքսիկոյի
Ամբողջ Տարածքին

Դուք Կրնաք Դիտել
Հայաստանեան Լուրեր - Քաղաքական Վերլուծութիւններ
Երաժշտական Հաղորդումներ - Եւայլն

Մանրամասնութիւններու Համար
Հեռաձայնել 818.547.9696

ԱՅՈՒՆ ԿՐ ՅԱԲԱՏԱՆՔ, ՈՐ «ԿՐՆԱՆՔ»Ը ԵՒ «ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ» ԱՆԽՈՒՄԱՓԵԼԻ Է

Մարումակուած էջ 6-էն

տղայ մըն էր, որ յետագային, իր քաղաքական այլ, ծերակուտական ամբողջ գործավառութեան շրջանին հետեւելով իր երկրի քաղաքական, խորական, տնտեսական, ռազմական եւ միջազգային գահավէժ քաղաքականութեան, իր մէջ համոզում ու սկզբունքներ դարձուց այն, որ արմատապէս այլատերած Սպիտակ Տունը ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ կարիք ունի:

Երկիրը կ'արձանագրէր ներքաբարոյական վարկի խորունկ անկում: Տակաւ կը համարուէր անիրաւութիւններու, ճշմարտութիւններու դէմ գործադրուած ցեղասպանութիւնները ուրացող եւ արուեստական, յերիւրածոյ ու չքացայտուած պատմաբանութիւններով պատերազմական գործողութիւններ շղթայագերծող կամ հրահրող երկիր: Տակաւ կը կորսնցնէր իր ժողովրդավարական, արդարադատ եւ ուղղամիտ՝ Ուիլսոնեան երկիր մը ըլլալու արդարակորով համբար, միջազգային թատերաբեմի վրայ:

Այս բոլորի վրայ, վերջին տասնամեակին սկսած եւ աննախատեսելի չափանիշներու հասած էր տնտեսական նվազումը երկրէն ներս, որուն կորստաբեր անդրադարձները զգալի էին աշխարհով մէկ:

Լայն ծաւալ ստացած էր գործազրկութիւնը, դրամի արժէքը կուտ, կայուն ծայրին, դրամատնային եւ մեծ ընկերութիւններու սնանկութիւնները, կեանքի սղութիւնը, դրամատնային խտրաբարոյութիւնն ու անմատչելիութիւնը: Անպահովութեան եւ վախի մթնոլորտը: Բազմազարկ ընկերութիւններ կը գրաւուէին, կը դրուէին անուրի:

Ահա, թէ ո՞ր անջնորդած էր երկիրը Պուշ-2-էն երկնակի ու թմամբայ անփառանկ ու գրամա-քաղաքական վարչակարգը, որու շարունակման յանձնարարութեան խոստումով նախագահական ընտրութիւններուն կը ներկայանար ձոն ՄԲԲԷՅԷՆ, որ նաեւ, ամերիկեան բանակները Աֆղանիստանէն եւ Իրաքէն տուն վերադարձնելու ժողովրդական համահունչ պահանջը կը պայմանաւորէր անոնց ամբողջական յաղթանակով..

Նոր շունչ, եռանդ, խանդավառութիւն, լուստեսութիւն եւ արեւելում մէկ խօսքով, նոր ՈԳԻ պէտք էր նվազամերու մէջ տուայտող այս երկրին, եւ այդ ոգին բերաւ Պարագ Օպամայ, պարզ, իմաստային ու խօսուն պատմական նշանակութիւն ու-

նեցող երկու բառի արկայծումով. ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ, որ պիտի ներշնչէր ու ոգեւորէր ԱՄՆ-ի սպիտակամորթ, սեւական, դեղին կամ սպիական ընտրող ազգաբնակչութեան երիտասարդ, միջին երեք սերունդի սրտերը, որոնք մակընթաց այլ ծաւալուն ալիքներով փոխադրուեցան դէպի փոփոխութիւն խոստացող ընտրական սնտուկները: Զարմանալիին՝ այդ նոյն ոգիով խանդավառուած էին երկրագունդի եօթանասուն մեծ երկիրներու ժողովուրդները, որոնք Օպամայէն կ'ակնկալէին խոստացուած փոփոխութիւնը Սպիտակ Տունէ ներս, երեւոյթ, որ կ'արտայայտէր ամբողջ աշխարհի դժգոհութիւնը Սպիտակ Տունէն:

Փոփոխութիւն խոստանալը մէկ բան, եւ սակայն - որովհետեւ այնքան արմատաւորուած, թնկոտ եւ քրքացած էին փոփոխութեան կարօտ բերինները - գայն կարեւոր իրագործելը ուրիշ բան էր: Կարելի պիտի դառնա՞ր գործադրել այդ փոփոխութիւնը: Կասկածները վերացնելու համար Օպամա իմ տուն անոր պատասխանար. «ԱՅՈՒՆ, ԿՐՆԱՆՔ»:

Կասկած չուրիմ, որ Պարագ Օպամա, թիկունքին ունի իր ամբողջական ժողովուրդը: Կը հաւատանք, որ ան միշտ կ'անգնած պիտի մնայ իր ժողովուրդի կողմին: Պիտի գործէ իր ժողովուրդի հետ: Պիտի նուիրուի իր ժողովուրդի կեանքի բարելաման աշխատանքին:

Համոզուած եմ, որ Օպամա, համաձայն բազմիցս առիթներով իր տուն եւ վերահաստատած հանգամանաւոր խոստումներուն, պիտի յարգէ եւ աշխատի լուծել իր աշխատանքի սեղանին դրուած բազմաբովանդակ ու բազմաբնոյթ խոստումներու բարդ թղթաածրարը, ուր եղեռնաբախտ այլ ժողովուրդներու շարքին, նաեւ, պիտի գտնուի իր նախորդներուն կողմէ խորաբար ուրացուած՝ Հայոց Ցեղասպանութեան նախնային, դատապարտման եւ հատուցման անժամանցելի պահանջատիրութիւնը, որուն պաշտպանութեան առաջին դիրքերու վրայ գտնուած է միշտ, եւ մինչեւ օրս կը գտնուի, իր ընտրեալ արժանաւոր Փոխնախագահ՝ Պրն. Ճօ Պայտըն:

Կ'ողջունեմ Պարագ Օպամայի պատմականօրէն անկիւնադարձային ընտրութիւնը իրրեւ ԱՄՆ. ի 44-րդ նախագահ, եւ կը մաղթեմ իրեն կատարելապէս յաջողութիւն, երկրէն ներս իր «փոփոխութիւն» առաջադրող յեղաշրջական խիզախ մարտահրաւերին:

50 ՅԱԶԱՐ ՏՈԼԱՐ ՅԱՆԳԱՆԱԿՈՒԵՑԱԿ Ի ՆՊԱՍՏ «ՅԱՅԱՍՏԱՆ» ԳԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԳԵԾԵԼԱՐՇԱԿԻ ԸՆԹԱՑՔԻՆ

Մարումակուած էջ 1-էն

Եայ ճանապարհով հարիւրաւոր մղոնները կտրելով առանձինը, հասաւ Վենիսը քաղաքը:

Այս ճամբորդութեան ընթացքին Գալապրիսային կը հետեւէր իր ամուսինը՝ Արա Պոյաճեան:

Հեծելաբշտի երկրորդ հանգրուանին՝ Վենիսը քաղաքէն մինչեւ Լոս Անճելըս, հեծելաբշտի միացան վազգէն Մազանեան, Կլէնտէյն եւ Ռաֆֆի Պետրոսեան, Թորոնթոնցէն:

Արշաւը իր աւարտին հասաւ Կիրակի, Նոյեմբեր 2-ին, հեծելաբշտի մասնակիցները հասան իրենց աւարտական կէտը՝ Լոս Անճելըսի Ս.

Յակոբ եկեղեցին: Մուտքին, անոնք դիմաւորուեցան հայկական նուագախումբի հնչուններուն տակ:

Ելոյթներ ունեցան Հայաստան Հիմնադրամի Հոգաբարձուներու խորհուրդէն ներս Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչ Արա Պոյաճեան, Հիմնադրամի Արեւմտեան Ամերիկայի վարչութեան ատենապետուհի Մարիա Միհրանեան, Ս. Յակոբ եկեղեցու հովիւ Տէր. Արշակ Քահանայ Խաչատուրեան եւ ուրիշներ:

Հեծելաբշտի մասին պատմող նկարահանումը պիտի ցուցադրուի Նոյեմբեր 27-ին տեղի ունենալիք թեյի ժամի հաղորդման ընթացքին:

ԻՆՉՈՒՄ ԶԵՐԲԱԿԱԼԵՑԻՆ

Մարումակուած էջ 2-էն

տասխան չտալը ընդամէնն ամբողջութեամբ է համոզումը, որ մենք գործ ունենք Համաժողովրդական շարժման ակտիւստներէն եւս մեկի նկատմամբ իրականացուող հաշուեյարդարի հետ: Հացպանեանը մեկուսացուած է: Ճաղավանդակները մէջ: Այժմ նա գրկուած է ազատագրուած տարածքները չլանձնելու նպատակով պայքար ծաւալելու հարաւորութիւնից, եւ գլխաւորը դա է:

Ինչ վերաբերուած է մահափորձին, որի մասին Հացպանեանը

նախազգուշացրեց ու ձերբակալուեց, ապա Հացպանեանի՝ ազատութեան մէջ կամ բանտում գտնուելը որեւէ կերպ չի անդրադառնալ գուհահեռաբար եւ, բնականաբար՝ ոչ հրապարակաջօրէն ընթացող քննութեան արդիւնքները վրայ: Ի վերջոյ, նոյնիսակ Ֆելիքս Էրմոնդովիչ Չերժինսկին չէր կարող մէկ-երկու օրում որեւէ մատնութիւն սուտ հուշակել. հոգու խորքում կը կասկածէր՝ գուցէ էնքան էլ սուտ չի էր մատնութիւնը, բա չստուգէ՞մ՝ համոզուեմ, սո՞ւտ է, թէ՞ սուտ չի:

ՊԱՐԱՔ ՕՊԱՄԱՅԻ ՅԱՂԱՆԱԿԸ

Մարումակուած էջ 6-էն

խուսափի իր կուսակցութեան ծայրահեղ ձախակողման դիրքորոշումներէն, եւ որդեգրէ առաւելաբար ձախ-կեղծող դիրքեր: Թէ ի՞նչ կրնան ըլլալ իր կայքերը Նեսի Փըլոսի եւ Հերի Ռիտի հետ, ներկայացուցիչներու Տունէն եւ Սենատէն ներս, կը մնան ճշդելի: Ո՞վ որուն վրայ պիտի կարենայ իշխել: Շատ հաւանաբար, նախագահը պիտի կարենայ ինքզինք «պարտադրել» ի պահանջեալ հարկին: Յարդ, ամէնուն ծանօթ է արդէն Օպամայի որդեգրած դիրքերը իրաքի եւ Աֆղանիստանի մասին: Ինչ կը վերաբերի ներքին բազմաթիւ հարցերու Օպաման երկար խօսած է տնտեսութեան վերականգնումի, կրթական հարցի, մանաւանդ առողջապահական դրութեան վերանայման, եւ ուժային հարցերու, կլիմայական կացութեան, եւ նման հարցերու մասին, ի՞նչ արագութեամբ, մանաւանդ ի՞նչ յաջողութեամբ պիտի կարենայ նաւարկել, կը մնայ ճշդելի: Շատ

հաւանօրէն, բաւականին երկար կրնայ տեւել իր իսկ խոստովանութեամբ, «մեղրալուսնային» շրջանը, իր կառավարութեան, որոշումներու ձախտագիրը, մանաւանդ մամուլի լայն շրջանակներու եւ ընդհանուր հասարակութեան մօտ, որոնք իրեն նպաստաւոր կեցուածքներ ունեցան ամբողջ ընտրապայքարի ընթացքին: Մեզի հայերուս պարագային ալ, կ'ենթադրեմ որ հայ համայնքի ձայները կեղծողներու իր եւ Պայտընի վրայ, այն ակնկալութեամբ որ այս երկուքը ցարդ որդեգրած են հայնապաստ կեցուածքներ, յատկապէս հայկական ցեղասպանութեան եւ Հայաստանի հետ սերտացման եւ օգնութեան հարցերու վերաբերեալ: Կը յուսանք որ նախորդ նախագահներու նման, ինքն ալ մեզ յուսախաբ պիտի չընէ, եւ այս առիթով, իր ընտրութեան շնորհալից յաջողութեան համար, իրեն եւ իր իշխանութեան կը մաղթենք յաջողութիւն եւ աշխարհի առջեւ Ամերիկայի տկարացած հեղինակութեան արագ վերականգնում:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA

ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680


ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ
Palm Springs

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուած լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, քարուղի, թեմիսի խողաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125
 Վարձման գներն են՝

Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

ՍՈՑԵԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 121 ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ



Կազմակերպութեամբ՝
ՄԴՆԿ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄՆԻ

Օրուան Գլխաւոր Բանախօս՝
ՎԱՀԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆ

ՄԴՆԿ-ի Կեդրոնական Վարչութեան Հայաստանի Ներկայացուցիչ
ՀՀ Պաշտպանութեան Նախկին Փոխնախարար

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

Տեղի կ'ունենայ
ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 22, 2008
ԵՐԵԿՈՅԱՆ ԺԱՄԸ 6-ԻՆ

ԿԼԵՆՏԵԼԻ ԿԼՈՐ ԵԿԵՂԵՑԻ
333 E. COLORADO BLVD. GLENDALE

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ